Ջոյս Մայեր

ԲԺՇԿԵԼ ՍՐՏՈՎ ԿՈՏՐՎԱԾՆԵՐԻՆ

Ընդունե՛ք վերականգնում
Աստծո Խոսքի
զորության միջոցով

Բժշկել սրտով կոտրվածներին

Ընդունե՛ք վերականգնում
Աստծո Խոսքի
զորության միջոցով

ՋՈՅՍ
ՄԱՅԵՐ

Բովանդակություն

Ներածություն. Աստծո Խոսքը 5

1. Վերապրե՛ք Աստծո սերը 13

2. Վստա՛հ եղեք ձեր ապագայի մեջ 27

3. Ճանաչե՛ք ձեր արդարությունը Քրիստոսում.....41

4. Հաղթահարե՛ք վախը ձեր կյանքում 55

Ամփոփում. հաստա՛տ կանգնեք 67

Սուրբգրային դավանություններ.....69

Ներածություն. Աստծո Խոսքը.....69

Աստծո սերը.....71

Ձեր ապագան.....78

Ձեր արդարությունը Քրիստոսում.....85

Հաղթահարե՛ք վախը.....93

Հաստա՛տ կանգնեք 99

Հղումներ 101

Հեղինակի մասին.....103

Ներածություն. Աստծո Խոսքը

♥ «Նա ուղարկում է Իր խոսքը և բժշկում է նրանց և փրկում է նրանց կործանման գուբից»:

ՍԱՂՄՈՍ 107.20

Աստծո Խոսքը բժշկում և փրկում է մեզ: Այն նույն–պես փոխում է մեզ և մեր կյանքերը:

Աստծո Խոսքը կփոխի ձեզ:

Սաղմոս 1.1-3-ում Դավիթը գրում է, որ այն մարդը, ով օր ու գիշեր մտորում է Խոսքի շուրջ, կդառնա ծառի պես, որն ամուր տնկված է, և կհաջողվի իր բոլոր գոր-ծերի մեջ:

Ամուր տնկված լինելը նշանակում է՝ կայուն լինել: Դուք կարող եք կայուն լինել, իսկ այն ամենը, ինչ անում եք, կարող է հաջողվել: Այսպիսին լինելու համար դուք պետք է մտորեք Աստծո Խոսքի շուրջ:

Խոսքի շուրջ մտորելը նշանակում է՝ կրկին ու կրկին պտտել այն ձեր մտքում, խորհել և մտածել դրա մասին և ցածրաձայն ասել ինքներդ ձեզ, ինչպես որ Տերը պատվիրեց Իր ծառա Հեսուին:

♥ «Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա քո բերանից, այլ դու պետք է մտորես դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանաս պահել և կատարել՝ համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ դու բարգավաճ կդարձնես քո ընթացքը, և այդ ժամանակ դու իմաստուն կվարվես և հաջողություն կունենաս»:

ՀԵՍՈՒ 1.8

Երկրորդ Օրինաց 30.14-ում մենք պատվեր ենք ստանում. ♥ *«Բայց խոսքը շատ մոտ է քեզ, քո բերանում և քո մտքում և քո սրտում, որպեսզի կարողանաս կատարել այն»*:

Եսայի 55.11-ում Տերը խոստանում է մեզ. ♥ *«Այսպես կլինի Իմ Խոսքը, որը դուրս է գալիս Իմ բերանից. այն դատարկ [առանց որևէ օգուտ տալու, զուր] չի վերադառնա Ինձ մոտ, այլ կիրականացնի այն, ինչը հաճեցնում է Ինձ և ինչն Իմ նպատակն է, և կհաջողվի այն բանում, ինչի համար Ես ուղարկում եմ այն»*:

Երկրորդ Կորնթացիների 3.18-ում Պողոս առաքյալը սովորեցնում է մեզ, որ նայելով Տիրոջ փառքին Իր Խոսքի մեջ՝ մենք վերափոխվում ենք: Տիրոջ փառքին նայելը մասամբ նշանակում է՝ տեսնել այն փառավոր ծրագիրը, որը Նա ունի մեզ համար, և հավատալ այդ ծրագրին:

Աստված սիրում է մեզ. Նա բարի և փառավոր ծրագիր ունի մեր կյանքերի համար: Եփեսացիների թղթի առաջին գլխում Պողոսն ասում է, որ Աստված կազմեց փրկության ամբողջ ծրագիրը Քրիստոսի միջոցով, այն մեծ սիրո շնորհիվ, որով Նա սիրեց մեզ:

Աստված սիրում է ձեզ. Նա հրաշալի և փառավոր ծրագիր ունի ձեզ համար և ձեր կյանքի համար: Դուք պետք է հավատաք այս ճշմարտությանը և դավանեք սա:

Սատանան փորձել է կործանել Աստծո ծրագիրը: Նա աշխատել է ձեր ամբողջ կյանքի ընթացքում՝ փորձելով համոզել, որ դուք անարժան զգաք ձեզ: Ո՞րն է դրա նպատակը. նա չի ցանկանում, որ դուք հավատաք, որ Աստված ի սրտե սիրում է ձեզ: Սատանան գիտի, որ եթե դուք շարունակ լսեք Աստծո Խոսքը և թույլ տաք, որ այն դառնա ձեր ներքին կյանքի և ձեր մտքերի մասը, դուք կփոխվեք: Իսկ նա չի ցանկանում, որ այդպես լինի:

Ահա թե ինչու եմ գրել այս գիրքը: Գրքում կան բազմաթիվ աստվածաշնչյան խոսքեր, և ես համոզված եմ, որ դրանք կփոխեն ձեր պատկերացումը սեփական անձի մասին՝ արդյունքում փոխելով թե՛ ձեր ներկան, թե՛ ապագան:

Համաձայն Աստվածաշնչի՝ դուք ստեղծվել եք Աստծո պատկերով (տե՛ս ԾՆՆԴՈՑ 1.27): Երբ հավատում եք այն ամենին, ինչ Աստված ասում է ձեր մասին, դուք սկսում եք այլ կերպ վերաբերվել ինքներդ ձեզ և այլ կարծիք եք կազմում ձեր մասին: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ եմ մտածում իմ մասին: Ի՞նչ կարծիք ունեմ իմ մասին»: Այնուհետև հարցրեք հետևյալը. «*Ի՞նչ է մտածում Աստված իմ մասին: Ի՞նչ կարծիք ունի Աստված իմ մասին»:*

Այն, ինչ Աստված մտածում և ասում է ձեր մասին, գրված է Իր Խոսքում: Այս գրքում զետեղված սուրբգրային դավանությունները կօգնեն ձեզ՝ համաձայնել ոչ թե թշնամու, այլ՝ Աստծո հետ: Հնարավոր է, որ սատանան ստել է ձեզ ամբողջ կյանքում, և դուք հավատացել եք նրան. եկել է Աստծուն հավատալու ժամանակը:

Հովհաննես 17.17-ում Հիսուսն ասաց, որ Աստծո Խոսքը ճշմարտություն է, իսկ Հովհաննես 8.32-ում ասաց, որ ճշմարտությունն ազատ կարձակի մեզ:

Մեզ ազատ արձակելուց բացի, Աստծո Խոսքը կամ ճշմարտության Խոսքը կփոխի մեր էությունը նաև պատկերացումը կյանքի մասին: Ահա թե ինչու դուք պետք է կարդաք Խոսքը, ուսումնասիրեք և մտորեք Խոսքի շուրջ՝ թույլ տալով, որ այն թափանցի ձեր ներսը:

Քրիստոսի մեջ դուք կարող եք լինել. վստահ, ուրախությամբ լցված, հաղթող, հավատարիմ, Աստծո ընկերը, այնպիսի մարդ, ով փնտրում է Աստծո երեսը[1]:

Դավանե՛ք այն, ինչ Աստված ասում է ձեր մասին Իր Խոսքում: Երբ անեք սա, Աստված կգործի ձեր կյանքում: Եթե ձեր սիրտը կոտրված է, եթե դուք խոցված եք և ձեր ներսում վախ կա, Նա կփոխի ձեզ՝ դարձնելով Իր հավատարիմ ընկերը, ում Ինքը սիրում է, և ով անչափ սիրում է Իրեն: Եսայի 61.1-3-ում գրված է.

> ♥ Տեր Աստծո Հոգին Ինձ վրա է, որովհետև Տերն օծել և որակավորել է Ինձ՝ քարոզելու Ավետարանի Բարի լուրը հեզերին, աղքատներին և տառապյալներին. Նա ուղարկել է Ինձ՝ վիրակապելու և բժշկելու սրտով կոտրվածներին, հրատարակելու ազատություն (ֆիզիկական և հոգևոր) գերիներին, և բացելու բանտի դռները նաև աչքերը՝ այն մարդկանց, ովքեր կապված են:

1. Ըստ՝ «Ես կփոխեմ քո անունը» երգի, բառերը և երաժշտությունը՝ Բի Ջեյ Բաթլերի © «Mercy Publishing»: Օգտագործված է ըստ թույլտվության:

Հռչակելու Տիրոջ ընդունելի տարին [Նրա բարեհաճության տարին] և մեր Աստծո վրեժխնդրության օրը, մխիթարելու նրանց, ովքեր սգում են:

Շնորհելու [մխիթարություն և ուրախություն] նրանց, ովքեր սգում են Սիոնում, տալու նրանց գեղեցկության զարդ (ծաղկեպսակ կամ թագ)՝ մոխրի փոխարեն, ուրախության յուղ՝ սգի փոխարեն, փառաբանության [արտահայտիչ] զգեստ՝ ծանր, բեռնավորված և ձախողվող հոգու փոխարեն, որ նրանք կոչվեն արդարության կաղնիներ [բարձր, ուժեղ և հոյակապ, աչքի ընկնող, արդարությամբ, ուղղությամբ և Աստծո հետ ճիշտ դիրքով]՝ Տիրոջ տնկածը, որ Նա փառավորվի:

Այո, Աստված փոխում է ձեզ: Նա փոխում է ձեր բնավորությունը: Նա փոխում է ձեր կյանքը: Աստված սիրում է ձեզ: Դուք հատուկ անձնավորություն եք: Թշնամին չի ցանկանում, որ ձեզ սիրված զգաք, բայց Աստված ցանկանում է:

Այս գրքի էջերում դուք կսովորեք, թե ինչպես վստահ լինել Աստծո սիրո մեջ, ինչպես համոզված լինել ապագայի մեջ, ինչպես իմանալ ձեր արդարության մասին (այն, թե ով եք դուք Քրիստոսում) և ինչպես հաղթահարել վախը (Աստված հրաշալի կյանք է ծրագրել ձեզ համար, և Նա ցանկանում է լցնել այն օրհնությունը-

ներով, բայց վախը կարող է գողանալ այդ օրհնությունները):

Աստված օրհնի՜ ձեզ ամբողջ այս ընթացքում, երբ դուք սովորում եք դավանել Նրա Խոսքը, որը դատարկ չի վերադառնա Նրա մոտ, այլ կիրականացնի Նրա կամքը և նպատակը ձեր կյանքում:

1

Վերապրե՛ք Աստծո սերը

♥ «Այնուամենայնիվ, այս ամենի մեջ մենք ավելի քան հաղթողներ ենք և գերազանց հաղթանակ ենք տանում Նրա միջոցով, Ով սիրեց մեզ:

Որովհետև ես համոզված եմ՝ առանց կասկածի նշույլի (ես հաստատ գիտեմ), որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ սպասվող կամ սպառնացող բաներ, ո՛չ գալիք բաներ, ո՛չ զորություններ,

Ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, ո՛չ էլ ցանկացած այլ բան ամբողջ ստեղծագործության մեջ չի կարողանա բաժանել մեզ Աստծո սիրուց, որը Քրիստոս Հիսուսում է՝ մեր Տիրոջ մեջ»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.37-39

Այս հատվածում Պողոս առաքյալը հավաստիաց-

նում է մեզ, որ անկախ այն բանից, թե ինչ կարող է պատահել կյանքում՝ մենք գերազանց հաղթանակ ունենք Քրիստոսի միջոցով, Ով այնքա՜ն սիրեց մեզ, որ տվեց Իր կյանքը մեզ համար:

Հովհաննես 3.16-ում Հիսուսն ասաց. ♥ *«Որովհետև Աստված այնպե՜ս սիրեց և այնքա՜ն թանկ գնահատեց այս աշխարհը, որ [նույնիսկ] տվեց Իր միածին (եզակի) Որդուն, որպեսզի ով որ հավատա (վստահի, հարի, հուսա) Նրան, չմահանա (կործանվի, կորչի), այլ ունենա հավիտենական (հավերժ) կյանք»:*

Հիսուսը սիրում է ձեզ այնքա՜ն շատ, որ կտար Իր կյանքը ձեզ համար, նույնիսկ եթե դուք միակ մարդը լինեիք այս աշխարհում:

Հովհաննեսը, ով Հիսուսի սիրելի աշակերտն էր, հայտնում է մեզ, որ ♥ «*վախ չկա սիրո մեջ [սոսկում գոյություն չունի], բայց հասուն (ամբողջական, կատարյալ) սերը դուրս է անում վախը դռներից և վտարում սարսափի ցանկացած հետք: Որովհետև վախն իր հետ բերում է միտք՝ պատժի մասին, և [այնպես որ] նա, ով վախենում է, չի հասել սիրո ամբողջական հասունությանը [դեռ չի հասել սիրո ամբողջական կատարելությանը]»* (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18):

Եթե մեր սրտում վախ կա, նշանակում է՝ մենք դեռ չգիտենք, թե որքա՞ն է Աստված սիրում մեզ:

Եթե դուք ճանաչեք Աստծո սիրո մեծությունը, ձեր բոլոր վախերը կանհետանան:

Հովհաննես 16.27-ում Հիսուսն ասաց. ♥ *«Որովհետև Հայրն Ինքը [քնքշորեն] սիրում է ձեզ, որովհետև դուք սիրեցիք Ինձ և հավատացիք, որ Ես դուրս եկա Հորից»:*

Մի՞թե ձեզ համար դժվար է հավատալ, որ Աստված այդ աստիճան հոգում է ձեր մասին:

Տարիներ շարունակ չէի կարողանում ընդունել Աստծո սերն իմ հանդեպ, որովհետև ես մտածում էի, որ պետք է արժանանայի Նրա սիրուն: Բայց հիմա գիտեմ, որ Նա սիրում է ինձ, թեև դեռևս թերություններ ունեմ:

Հովհաննես 14.21-ում Հիսուսը հիշեցնում է մեզ. ♥ *«Այն մարդը, ով ունի Իմ պատվիրանները և պահում է դրանք, նա է, ով [իսկապես] սիրում է Ինձ, և ով որ [իսկապես] սիրում է Ինձ, կսիրվի Իմ Հոր կողմից, և Ես [նույնպես] կսիրեմ նրան և ցույց կտամ (կհայտնեմ, կդրսևորեմ) Ինձ՝ նրան: [Ես պարզորեն տեսանելի կդարձնեմ Ինձ՝ նրան, և իրական կդարձնեմ Ինձ՝ նրան]»:*

Հիսուսը ցանկանում է Իրեն հայտնել ձեզ՝ դառնալով իրական ձեզ համար:

Հնազանդությունը ճշմարիտ սիրո պտուղն է, բայց դուք երբեք չեք կարողանա սիրել Աստծուն այնքան, որ հնազանդվեք Նրան, եթե նախ՝ չընդունեք Նրա սերը ձեր հանդեպ: Դուք չեք կարող վաստակել այն: Դուք չեք կարող գնել այն բարի գործերով, կամ ձեռք բերել բարի վարքով:

Աստծո սերը ձրի պարգև է. այն անպայմանական է: Մենք ստանում ենք Նրա սերն այն զոհի միջոցով, որը Հիսուսն արեց, երբ մահացավ խաչի վրա մեզ համար:

Ընդունե՛ք Աստծո սերը հենց հիմա: Նստե՛ք Նրա ներկայության մեջ և ասե՛ք. «Ես հավատում եմ, որ Դու սիրում ես ինձ, Տե՛ր, և ընդունում եմ Քո սերը»:

Հովհաննեսի առաջին թղթի 4.19-ում գրված է. ♥ «*Մենք սիրում ենք Նրան, որովհետև Նա առաջինը սիրեց մեզ*»: Միգուցե դուք փորձել եք հակառակն անել, ինչպես և ես՝ տարիներ շարունակ: Հավանաբար, դուք փորձել եք բավականաչափ սիրել Աստծուն և բավականաչափ գործեր անել՝ Նրա սերն ստանալու համար: Բայց կրկին կարդացեք Ա Հովհաննեսի 4.19-ը. ♥ *«Մենք սիրում ենք Նրան, որովհետև Նա առաջինը սիրեց մեզ»:*

Դավիթը վստահ էր Աստծո սիրո մեջ, երբ Սաղմոս 36.7-ում ասաց. ♥ «*Որքա՜ն թանկ է Քո հաստատ սերը, ո՜վ Աստված: Մարդկանց զավակներն ապաստան են գտնում և հույսով ապրում են Քո թևերի շուքի տակ»:*

Ես կցանկանայի կիսվել ձեզ հետ Սաղմոս 139-ի մի քանի խոսքով: Դավիթը եզակի շփում ուներ Աստծո հետ, և մենք լավ կանենք, եթե հետևենք Նրա օրինակին: Դավանե՛ք այս Սաղմոսի բառերը ձեր շուրթերով.

♥ «Ո՜վ Տեր, Դու քննեցիր իմ սիրտը և գիտես ամեն ինչ իմ մասին: Դու գիտես, թե երբ եմ նստում կամ կանգնում: Երբ հեռվում եմ, Դու գիտես իմ ամեն մի միտքը: Դու գծում ես այն շավիղը, որն իմ առջևում է, և ասում ես ինձ, թե որտեղ կանգ առնեմ և հանգստանամ: Ամեն ժամանակ Դու գիտես, թե որտեղ եմ ես: Դու գիտես, թե ինչ եմ ասելու, նույնիսկ՝ մինչև իմ ասելը: Դու և՛ նախորդում ես, և՛ հետևում ես ինձ, և դնում ես Քո օրհնության ձեռքն իմ գլխին:

Սա այնքա՜ն փառավոր է, այնքա՜ն հրաշալի է՝ հավատալու համար: Ես երբեք չեմ կարող կորել Քո Հոգու համար: Ես երբեք չեմ կարող փախչել իմ Աստծուց…

Տե՜ր, որքա՜ն թանկ է գիտակցելը, որ Դու շարունակ մտածում ես իմ մասին: Ես նույնիսկ չեմ կարող հաշվել, թե օրվա մեջ քանի՜ անգամ են Քո մտքերը դառնում դեպի ինձ: Եվ երբ առավոտյան արթնանում եմ, Դու դեռ շարունակում ես մտածել իմ մասին»:

ՍԱՂՄՈՍ 139.1-7,17,18, TLB

Որքա՞ն զորավոր է:

Եսայի մարգարեն ասում է, որ Աստված սպասում է, որ բարություն անի մեզ. ♥ «*Եվ այդ պատճառով, Տերն [փափագով] սպասում է [ակնկալում է, փնտրում է և ձգտում է]՝ ողորմած լինել ձեր հանդեպ, և այդ իսկ պատճառով, Նա բարձրանում է, որպեսզի ողորմա ձեզ և սիրով լի գթասրտություն ցուցաբերի ձեր հանդեպ: Որովհետև Տերը արդարության Աստված է: Օրհնված (երջանիկ, բախտավոր, նախանձելի) են նրանք, ովքեր [փափագով] սպասում են Նրան, ովքեր ակնկալում, փնտրում և ձգտում են Նրան [Նրա հաղթանակին, Նրա բարեհաճությանը, Նրա սիրուն, Նրա խաղաղությանը, Նրա ուրախությանը և Նրա աննման, անխախտ ընկերակցությանը]*» (Եսայի 30.18):

Մտածե՛ք այս մասին. Աստված ցանկանում է ժամանակ անցկացնել ձեզ հետ, որովհետև Նա սիրում է ձեզ, և որովհետև դուք հատուկ եք Նրա համար:

Աստված այնքա՞ն է սիրում ձեզ, որ «Նա հաշվում և գրանցում է ձեր դեգերումներն այս կյանքում: Նա անոթի մեջ է լցնում ձեր արցունքները և գրի է առնում դրանք Իր գրքում» (ՍԱՂՄՈՍ 56.8):

Հովհաննես 14.18-ում Հիսուսն ասաց Իր աշակերտներին. ♥ «*Ես չեմ թողնի ձեզ որպես որբեր [անմխիթար,*

լքված, առանց հարազատների, մոռացված, անօգնական]. Ես [ետ] կգամ ձեզ մոտ»:

Սաղմոս 27.10-ում Դավիթը գրում է. ♥ *«Թեև իմ հայրը և մայրը լքել են ինձ, Տերը կբարձրացնի ինձ [կորդեգրի ինձ՝ դարձնելով Իր զավակը]»:*

Միգուցե դուք զգում եք այն բնական սիրո կարիքը, որն ամեն մարդ ցանկանում և փնտրում է. միգուցե նույնիսկ ձեր ընտանիքն է լքել ձեզ: Այսօր Աստված ցանկանում է՝ իմանաք, որ Նրա սերը ձեր հանդեպ այնքա՜ն մեծ, այնքա՜ն ուժգին և այնքա՜ն զորավոր է, որ այն լիովին կփոխարինի ցանկացած մարդկային սիրո, որից զրկված եք եղել կյանքում: Թույլ տվեք Նրան՝ մխիթարել ձեզ և բժշկել ձեր կոտրված սիրտը:

Դուք որդեգրվել եք Աստծո ընտանիքի մեջ: Դուք Նրա զավակն եք, և Նա սիրում է ձեզ:

Եփեսացիների 3.17-19-ում Պողոս առաքյալն աղոթեց ձեզ և ինձ համար:

♥ «Թող որ Քրիստոսը ձեր հավատքի միջոցով [իրականում] բնակվի (հաստատվի, ապրի) ձեր սրտում (դարձնի այն Իր մշտական տունը): Թող որ դուք լինեք խորապես արմատացած՝ սիրո մեջ, և ապահով հիմնված լինեք սիրո վրա,

Որպեսզի դուք զորություն ունենաք և ուժեղ լինեք, որ ըմբռնեք և հասկանաք բոլոր սրբերի հետ [Աստծո

նվիրված մարդկանց, այդ սիրո վերապրումը], թե ինչ է [դրա] լայնությունը և երկարությունը և բարձրությունը և խորությունը,

[Որ դուք իրականում] ճանաչեք [գործնականորեն, ինքներդ՝ փորձառության միջոցով] Քրիստոսի սերը, որը շատ ավելի գերազանցում է հասարակ գիտելիքը [առանց փորձառության], որ դուք լցվեք [ձեր ամբողջ էությամբ] Աստծո ամբողջ լիությամբ [կարողանաք ունենալ Աստվածային ներկայության ամենաառատ չափը, և դառնաք այնպիսի մարմին, որն ամբողջովին լցված և հեղեղված է անձամբ Աստծով]»:

Այո, Աստված սիրում է ձեզ, Նա հսկում է ձեզ: Նրա աչքերը ձեզ վրա են ամեն ժամանակ: Եսայի 49.16-ում գրված է, որ Նա կնքել կամ դաջել է ձեր պատկերը Իր ձեռքերի ափերի մեջ:

Հովհաննես 15.9-ում (TLB) Հիսուսն ասաց. ♥ «*Ես սիրեցի ձեզ այնպես, ինչպես Հայրը սիրեց Ինձ: Ապրե՛ք Իմ սիրո մեջ»:*

Որքա՞ն է Աստված սիրում ձեզ:

♥ «Ոչ ոք չունի ավելի մեծ սեր [ոչ ոք չի ցուցաբերել ավելի ուժգին սիրո զգացմունք], քան ընկերների համար կյանքը դնելը [իր կյանքից հրաժարվելը]» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.13):

Ոչ ոք չունի ավելի մեծ սեր ձեր հանդեպ:

Հիսուսը ցանկանում է լինել ձեր Ընկերը: Նա զոհեց Իր կյանքը ձեզ համար, որպեսզի ցույց տար, թե որքա՞ն է սիրում ձեզ:

Հռոմեացիների 5.6-ում Պողոսը հիշեցնում է մեզ. ♥ *«Երբ մենք դեռ տկարության մեջ էինք [անզոր՝ ինքներս մեզ օգնելու], պատշաճ ժամանակին Քրիստոսը մահացավ անօրեն մարդկանց համար (փոխարեն)»:*

Ճիշտ ժամանակին Աստված ցույց տվեց Իր անսահման սերը մեր հանդեպ՝ ուղարկելով Քրիստոսին, որպեսզի Նա մահանար մեզ համար, երբ մենք դեռ մեղավոր էինք:

Հաջորդ՝ յոթերորդ խոսքում Պողոսը շարունակում է. ♥ «*Արտասովոր բան է, որ ինչ-որ մեկը տա իր կյանքը նույնիսկ արդար մարդու համար, թեև, միգուցե ազնիվ, սիրելի և առատաձեռն բարեգործի համար ինչ-որ մեկը համարձակվի մեռնել»:*

Ի վերջո, ութերորդ խոսքում Պողոսը եզրակացնում է. ♥ «*Բայց Աստված ցույց է տալիս և պարզորեն ապացուցում է Իր [սեփական] սերը մեր հանդեպ այն փաստով, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը (Մեսիան, Օծյալը) մահացավ մեզ համար»:*

Իմ ընկե՛ր, Աստված այնքա՞ն շատ է սիրում ձեզ: Սուրբ Հոգին փորձում է հայտնել ձեզ Աստծո սերը: Բացե՛ք ձեր սիրտը և ընդունե՛ք Աստծո սերը: Նա ընդունում է ձեզ այնպիսին, ինչպիսին դուք հիմա եք: Նա երբեք չի մերժում ձեզ և երբեք չի դատապարտում (տե՛ս ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.18):

Եփեսացիների 1.6-ում Պողոսը գրում է, որ մենք ընդունելի ենք դարձել Աստծո համար «Սիրելիի միջոցով», այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսով: Մենք ընդունելի չենք դարձել, քանի որ կարող ենք կատարյալ լինել: Միայն Քրիստոսի միջոցով է, որ մենք արդարացվել ենք և կարող ենք մոտենալ Հորը:

♥ «*Նրա բարությունն այնքա՞ն առատ է մեր հանդեպ,*- ասում է Աստվածաշունչը Եփեսացիների 1.7-ում (TLB),- *որ Նա [Աստված] վերցրեց մեր բոլոր մեղքերը Իր Որդու արյամբ, Ում միջոցով մենք փրկված ենք. Նա անձրևեց մեզ վրա Իր շնորհքի առատությունը՝ այն, թե որքա՞ն լավ է Նա հասկանում մեզ և գիտի, թե ինչն է լավագույնը մեզ համար ամեն ժամանակ»:*

Իսկ Եսայի 54.10-ում գրված է. ♥ «*Որովհետև թեև սարերն էլ բաժանվեն, և բլուրները ցնցվեն կամ հեռանան, սակայն Իմ սերը և բարությունը չի բաժանվի քեզ-*

նից, ո՛չ էլ Իմ խաղաղության և ամբողջականության ուխտը կհեռանա,- ասում է Տերը, Ով գթած է քո հանդեպ»:

Կորնթացիների առաջին թղթի 1.9-ում Պողոսը հիշեցնում է մեզ, որ ♥ *«Աստված հավատարիմ է (հուսալի, վստահելի, և այդ պատճառով մշտապես հավատարիմ է Իր խոստմանը, և Նրանից կարելի է կախված լինել)…»:* Նա խոստացել է, որ երբեք չի մերժի ձեզ, քանի դեռ հավատում եք Քրիստոսին: Նա նույնպես խոստացել է, որ սիրելու է ձեզ, և Նա պահում է Իր խոստումները:

Հովհաննես 17.9-10-ում Հիսուսը հայտնում է, որ Ինքն աղոթում է ձեզ համար, որովհետև դուք պատկանում եք Նրան: Աստված է տվել ձեզ Նրան, և Նա փառավորվում է ձեզանում:

Աստված սիրում է ձեզ. ընդունե՛ք այդ սերը:

Դավանե՛ք սաղմոսերգու Դավթի հետ.

♥ «Օրհնի՛ր (սիրառատ կերպով և գոհությամբ գովաբանի՛ր) Տիրոջը, ո՛վ իմ անձ, և այն ամենը, ինչը [խորը] իմ ներսում է, օրհնի՛ր Նրա սուրբ անունը:

Օրհնի՛ր (սիրառատ կերպով և գոհությամբ գովաբանի՛ր) Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր բարիքները [դրանցից ոչ մեկը].

Ով ներում է քո բոլոր [ամեն մի] անօրինությունները,
Ով բժշկում է քո բոլոր [ամեն մի] հիվանդությունները,

Ով փրկում է քո կյանքը գուբից և ապականությունից, Ով զարդարում, վեհացնում և թագադրում է քեզ սիրով լի բարությամբ և գթառատ ողորմությամբ»:

ՍԱՂՄՈՍ 103.1-4

«Լիվինգ Բայբլ» թարգմանության մեջ Սաղմոս 103.5,6,8,11-13 և 17 խոսքերում Դավիթն ասում է Տիրոջ մասին.

♥ «Նա լցնում է իմ կյանքը բարի բաներով: Իմ երիտասարդությունը նորոգվում է արծվի երիտասարդության պես: Նա արդարություն է տալիս նրանց, ում հետ անարդար են վարվել…

Նա ողորմած և գթառատ է նրանց հանդեպ, ովքեր արժանի չեն դրան. Նա դանդաղորեն է բարկանում և լի է բարությամբ և սիրով: Նա երբեք ոխ չի պահում, ո՛չ էլ հավիտյան բարկացած է մնում… որովհետև Նրա ողորմությունը նրանց հանդեպ, ովքեր վախենում են Իրենից և պատվում են Իրեն, նույնքան մեծ է, որքան երկինքը՝ երկրից: Նա հեռացրել է մեր մեղքերը այնքան, որքան արևելքը՝ արևմուտքից: Նա մեզ համար հոր պես է, գթառատ և կարեկցող նրանց հանդեպ, ովքեր երկյուղածությամբ են վերաբերվում Նրան…

…Տիրոջ սիրով լի բարությունը հավիտենից հավիտյան է…»:

Սաղմոս 32.10-ում (TLB) Դավիթը կրկին ասում է. ♥ *«…հարատև սերը շրջապատում է նրանց, ովքեր վստահում են Տիրոջը»:* Սաղմոս 34.1-8-ում նա գրում է.

♥ «Ես կփառաբանեմ Տիրոջը՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում: Ես շարունակ կխոսեմ Նրա փառքի և շնորհքի մասին: Ես կպարծենամ իմ հանդեպ ունեցած Նրա բարությունով: Թող որ նրանք, ովքեր վիատված են, քաջալերվեն: Եկեք միասին փառաբանենք Տիրոջը և մեծարենք Նրա անունը:

Որովհետև ես աղաղակեցի Նրան, և Նա պատասխանե՞ց ինձ: Նա ազատեց ինձ իմ բոլոր վախերից: Մյուսները նույնպես ուրախությունից փայլում էին այն պատճառով, թե ինչ արեց Նա իրենց համար: Նրանց հայացքները մերժվածությունից իջեցված չէին: Այս աղքատ մարդն աղաղակեց Տիրոջը, և Տերը լսեց նրան, և նրա բոլոր նեղություններից փրկեց նրան: Որովհետև Տիրոջ հրեշտակը պահպանում և փրկում է նրանց, ովքեր երկյուղած են Իր հանդեպ:

Ո՞հ, փորձի՛ր Աստծուն և տե՛ս, թե որքա՞ն բարի է Նա: Ի՛նքդ համոզվիր, թե ինչպես են Նրա ողորմությունները անձրևի նման թափվում նրանց վրա, ովքեր վստահում են Նրան»:

Պետրոսն ասում է մեզ, որ սերը ծածկում է մեղքերի շատությունը (տե՛ս Ա ՊԵՏՐՈՍ 4.8): Աստծո սերը ծած-

կում է ձեզ: Ապրե՛ք այդ ծածկոցի տակ: Թո՛ւյլ տվեք, որ այն օրհնի ձեր կյանքը: Շարունակ դավանե՛ք և օրվա ընթացքում անընդմեջ կրկնեք. «Աստված սիրո՞ւմ է ինձ»:

Մտորե՛ք այս գլխում զետեղված աստվածաշնչյան խոսքերի շուրջ: Կատարե՛ք այս հնազանդության քայլը, և այն կօգնի ձեզ, որ Տիրոջից ընդունեք այն, ինչ Նա ցանկանում է տալ ձեզ՝ Իր առատ և հարատև սերը:

2

Վստա՛հ եղեք ձեր ապագայի մեջ

Այս գլխում ցանկանում եմ կիսվել աստվածաշնչյան խոսքերով այն հրաշալի ապագայի մասին, որն Աստված ծրագրել է ձեզ համար: Ես ցանկանում եմ, որ իմանաք՝ դուք մեծ արժեք ունեք, և Աստված ստեղծել է ձեզ հատուկ նպատակով:

Մի երգի մեջ, որի վերնագիրն է՝ «Ես կոչում ունեմ», հեղինակը պնդում է, որ ինքը կոչում ունի և գիտի, որ կատարելու է այն: Այդ կոչումը նախասահմանված է եղել նրա համար Աստծո կողմից, Ով ընտրել է նրան, և Ով զորավոր կերպով գործում է նրա միջոցով՝ Իր Հոգու զորությամբ: Այն ավարտվում է ոգևորիչ դավանանքով. «Ես կոչում ունեմ, և այն դատարկ ցանկություն չէ, քանի

որ ես գիտեմ, որ ծնվե՞լ եմ այսպիսի ժամանակվա, այսպիսի ժամանակվա, այսպիսի ժամանակվա համար»[1]:

Իսկ ի՞նչ կասեք դուք: Ինչպիսի՞ն եք տեսնում ձեր ապագան:

Աստված ցանկանում է, որ դուք լցվեք հույսով, իսկ սատանան ցանկանում է, որ դուք անհույս լինեք: Աստված ցանկանում է, որ ակնկալեք, որ ձեր կյանքում ամեն օր լավ բաներ տեղի կունենան: Սատանան նույնպես ցանկանում է, որ ակնկալիքներ ունենաք, սակայն՝ կործանման և դժբախտության մասին:

Առակաց 15.15-ի հեղինակը գրում է. ♥ *«Թշվառ և տառապյալ մարդու բոլոր օրերը չար են դառնում [անհանգիստ մտքերի և կանխազգացումների պատճառով], բայց նա, ով ուրախ սիրտ ունի, մշտական խնջույքի մեջ է [անկախ հանգամանքներից]»:*

Չար կանխազգացումներ ունենալը պարզապես նշանակում է՝ սպասել վատ բաների, նախքան դրանց կատարվելը: Այս խոսքում պարզ գրված է, որ մեր օրերը լի են տառապանքով հենց չար կանխազգացումների պատճառով:

1 © 1993, «Կոչման մարդիկ» («Word Music»): Բոլոր իրավունքները պաշտպանված են: Օգտագործված է ըստ թույլտվության:

Սաղմոս 27.13-ում Դավիթը գրում է. ♥ *«[Ի՞նչ, ի՞նչ կլիներ ինձ հետ], եթե ես չհավատայի, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը կենդանիների երկրում»:* Հաջորդ խոսքում նա հորդորում է մեզ. ♥ «*Սպասի՛ր և հուսա՛ և ակնկալի՛ր Տիրոջը. համարձա՛կ և խիզա՛խ եղիր, և թող որ քո սիրտը հաստա՛տ և տոկո՛ւն լինի: Այո՛, սպասի՛ր և հուսա՛ և ակնկալի՛ր Տիրոջը»:*

Երեմիա 29.11-ում Տերը հայտնում է. ♥ «*Որովհետև ես գիտեմ այն մտքերը և ծրագրերը, որոնք ես ունեմ ձեզ համար,- ասում է Տերը, մտքեր և ծրագրեր բարեկեցության և խաղաղության համար, և ոչ թե չարիքի համար, որպեսզի տամ ձեզ հույս՝ ձեր վերջնական արդյունքի համար»:*

Հիշե՛ք՝ սատանան ցանկանում է, որ դուք անհույս լինեք: Նա ցանկանում է, որ դուք անհույս տեսք ունենաք, մտածեք անհուսության մասին, խոսեք առանց հույսի և վարվեք անհույս մարդու պես:

Բայց լսե՛ք այս ազդեցիկ խոսքը, որը Դավիթը գրել է Սաղմոս 42.11-ում. ♥ *«Ինչո՞ւ ես տրտում, ո՜վ իմ ներքին անձ: Եվ ինչո՞ւ դու պետք է հառաչես ինձ համար և խռովված լինես իմ ներսում: Հուսա՛ Աստծուն և անհամբեր սպասի՛ր Նրան, որովհետև ես դեռ կփա-*

ռաբանեմ Նրան, Ով իմ երեսի օգնությունն է և իմ Աստվածը»:

Թաքցրե՛ք ձեր սրտում նման աստվածաշնչյան խոսքեր, և դրանք կօգնեն ձեզ, որ լցված մնաք հույսով և ուրախալի սպասումով: Դուք հույսով լի տեսք կունենաք, կմտածեք հույսի մասին, կխոսեք հույսով և կվարվեք հույսով լցված մարդու պես:

Հռոմեացիների 5.5-ում Պողոս առաքյալն ասում է մեզ, որ ♥ «*Նման հույսը երբեք հուսախաբ չի անում, չի ստում և չի ամաչեցնում մեզ, որովհետև Աստծո սերը լցված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, Ով տրվել է մեզ»:*

Այլ կերպ ասած՝ մենք գիտենք, որ Աստված սիրում է մեզ, որովհետև Սուրբ Հոգին սովորեցնում է մեզ այդ մասին: Մենք հուսացած ենք Աստծուն, քանի որ համոզված ենք, որ Նա սիրում է մեզ և հրաշալի ապագա է ծրագրել մեզ համար: Եվ երբ մեր հույսը և ակնկալիքն ուղղված են Նրան, մենք երբեք հուսախաբ չենք լինի, չենք խաբվի կամ չենք ամաչի:

Սաղմոս 84.11-ում (KJV) գրված է. ♥ «*Որովհետև Տեր Աստված արև է և վահան. Տերը շնորհք և փառք կտա. ոչ մի բարի բան չի պահվի նրանցից, որոնց ընթացքն ուղիղ է»:*

Փիլիպեցիների 1.6-ում Պողոսը հավաստիացնում է մեզ. ♥ «*Եվ ես համոզված եմ և վստահ եմ հենց այս բանում, որ Նա, Ով բարի գործ սկսեց ձեզանում, կշարունակի մինչև Հիսուս Քրիստոսի օրը [ճիշտ մինչև Նրա վերադարձի ժամանակը]՝ ձեր մեջ զարգացնելով [այդ բարի գործը], կատարելագործելով և բերելով այն ամբողջական ավարտվածության»:*

Եփեսացիների 2.10-ում Պողոսը բացատրում է իր մեծ վստահության պատճառը.

> ♥ «Որովհետև մենք Աստծո ձեռքի գործն ենք (Նրա գործակիցները), վերստեղծված Քրիստոս Հիսուսում [վերստին ծնված], որպեսզի կատարենք այն բարի գործերը, որոնք Աստված նախասահմանել է (նախապես ծրագրել է) մեզ համար [քայլելով այն շավիղներով, որոնք Նա նախօրոք պատրաստել է], որ մենք քայլենք դրանցում [ապրելով այն բարի կյանքը, որը Նա նախօրոք ծրագրել և պատրաստել է, որ ապրենք այն]»:

Միգուցե հարց առաջանա. «Եթե Աստված այսպիսի բարի ծրագիր ունի ինձ համար, ե՞րբ եմ ես տեսնելու այն»:

Պատասխանը գրված է Ժողովող 3.17-ում. ♥ «*…որովհետև կա [նշանակված] ժամանակ ամեն գործի և մտադրության և ամեն աշխատանքի համար»:*

Աստված կիրականացնի Իր ծրագիրը և նպատակը ձեզ համար Իր որոշած ժամանակին: Ձեր գործն է՝ պարզապես անել այն, ինչ առաջարկում է Պետրոսը: Խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ ժամանակին Նա կարողանա բարձրացնել ձեզ (տե՛ս Ա ՊԵՏՐՈՍ 5.6):

Ամբակում 2.2-ում Տերը տեսիլք տվեց Իր մարգարեին մի ծրագրի մասին, որը պետք է իրականանար ապագայում՝ պատվիրելով գրել այն, որպեսզի ուրիշները կարողանային կարդալ այդ ծրագիրը: Բայց հաջորդ խոսքում Նա շարունակեց՝ ասելով. ♥ «*Բայց այս բաները, որոնք ես ծրագրում եմ, անմիջապես տեղի չեն ունենա: Դանդաղ, կայուն և հաստատուն կերպով, մոտենում է ժամանակը, երբ այս տեսիլքը կիրականանա: Եթե թվում է, թե այն դանդաղում է, մի՛ հուսահատվիր, որովհետև այս բաներն անպատճառ կիրականանան: Միայն թե համբերատար եղիր: Դրանք չեն ուշանա նույնիսկ մեկ օրով*» (ԱՄԲԱԿՈՒՄ 2.3, TLB):

Եբրայեցիների թղթի հեղինակը 6.18,19-ում (NAS) ասում է, որ ♥ «*…մենք կարող ենք մեծապես խրախուսված լինել՝ մենք, ովքեր ապաստան են գտել՝ բռնելով այն հույսը, որը դրված է մեր առջև: Այս հույսը՝ որպես անձի խարիսխ, և՛ հաստատ է, և՛ անսասան, և՛ այնպիսին, որը մտնում է վարագույրից ներս*»:

Եվ Պողոսն ասում է, որ ♥ «*...Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին՝ նրանց, ովքեր նախասահմանվելով կանչված են*» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.28, ԱՐԱՐԱՏ): Ավելի ուշ՝ Եփեսացիներին ուղղված իր նամակում Պողոսը հիշեցնում է, որ մենք նպատակ ունենք՝ ասելով. ♥ «*Նրան, Ով այն զորությամբ (դրա հետևանքով), որը գործում է մեզանում [Իր զորության գործողությամբ], կարող է [իրականացնել Իր նպատակը և] անել գերառատորեն, շատ ավելի և բարձր, քան մենք [համարձակվում ենք խնդրել կամ մտածել] խնդրում ենք կամ մտածում [անսահմանորեն ավելի շատ, քան մեր ամենավեհ աղոթքները, ցանկությունները, մտքերը, հույսերը կամ երազանքները]...*» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.20):

Աստված ցանկանում է, որ դուք հույսով լցված լինեք, որովհետև Նա պատրաստ է անել նույնիսկ ավելի մեծ բաներ, քան դուք կարող եք հուսալ: Այնուամենայնիվ, եթե դուք հուսահատված եք, ինչպես որ սատանան է ցանկանում, ուրեմն դուք չեք կատարում այն, ինչ Աստված խնդրել է ձեզ՝ անել, այսինքն՝ հուսալ Նրան և սպասել Նրանից, հավատալ, որ Նա բարի ծրագիր ունի ձեր կյանքի համար, և վստահել, որ այդ ծրագիրն իրականացման փուլում է:

Եփեսացիների 1.11-ում Պողոսն ասում է Տեր Հիսուս Քրիստոսի մասին. ♥ «*Նրանում մենք նույնպես դարձել ենք [Աստծո] ժառանգությունը (բաժինը), և ձեռք ենք բերել ժառանգություն, որովհետև մենք նախասահմանված ենք եղել (նախապես ընտրված և նշանակված)՝ համաձայն Նրա նպատակի, Ով իրականացնում է ամեն ինչ՝ ըստ Իր կամքի խորհրդի և ծրագրի»:*

Հիշե՛ք Հեսու 1.8-ում Աստծո պատվիրանը՝ Իր ծառային. ♥ *«Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա քո բերանից, այլ դու պետք է մտորես դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանաս պահել և կատարել՝ համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ դու բարգավաճ կդարձնես քո ընթացքը, և այդ ժամանակ դու իմաստուն կերպով կվարվես և բարի հաջողություն կունենաս»:*

Հիշե՛ք նույնպես Երկրորդ Օրինաց 30.14-ը, որտեղ գրված է. ♥ «*Բայց խոսքը շատ մոտ է քեզ, քո բերանում է, քո մտքում և քո սրտում է, որպեսզի դու կարողանաս կատարել այն»:*

Եսայի 55.11-ում Տերը ցույց է տալիս, թե ինչպես է Աստծո Խոսքը դավանելն օգնում իրականացնել Իր նպատակները մեր կյանքերում. ♥ «*Այսպես կլինի Իմ խոսքը, որը դուրս է գալիս Իմ բերանից. այն դատարկ*

[առանց որևէ օգուտ տալու, զուր] չի վերադառնա Ինձ մոտ, այլ կիրականացնի այն, ինչը հաճեցնում է Ինձ և ինչն Իմ նպատակն է, և կհաջողվի այն բանում, ինչի համար Ես ուղարկում եմ այն»:

Տվե՛ք ձեր բերանն Աստծուն. թո՛ւյլ տվեք, որ այն դառնա Նրա բերանը: Սկսե՛ք խոսել Նրա Խոսքը, որովհետև Նա ունի բարի ապագա, բարի նպատակ և բարի ծրագիր ձեզ համար: Խոսե՛ք այն, ինչ ասում է Աստված, ոչ թե թշնամին:

Հիշե՛ք, որ յուրաքանչյուրս աստվածային կոչում ունի:

Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն կլինեք ապագայում: Սատանան ցանկանում է, որ մտածեք, որ ձեր կյանքը շարունակ ընթանալու է ոչ թե դեպի լավը, այլ՝ դեպի վատը: Նա ցանկանում է, որ մտածեք, թե որքա՜ն ճանապարհ դեռ պետք է անցնեք, փոխարենը մտածելու, թե որքա՜ն ճանապարհ եք արդեն անցել:

Արդյո՞ք հիասթափվում եք ինքներդ ձեզնից՝ կարծելով, որ այդպես էլ չեք փոխվելու. մի՛ կորցրեք ձեր հույսը: Աստված անդադար փոխում է ձեզ: Նրա Խոսքը զորավոր կերպով գործում է ձեզանում: Երկրորդ Օրինաց 7.22-ը հիշեցնում է մեզ, որ Նա օգնում է մեզ՝ հաղթել մեր թշնամիներին աստիճանաբար:

Երկրորդ Կորնթացիների 3.18-ում Պողոսն ասում

է, որ երբ նայում ենք Տիրոջը Նրա Խոսքում, մենք շարունակ այլակերպվում ենք կամ փոխվում Նրա պատկերով՝ ♥ «*փառքի մի մակարդակից՝ մյուսը*»:

Իսկ Հռոմեացիների 12.2-ում գրված է, որ մենք վերափոխվում ենք մեր մտքի ամբողջական նորոգությամբ, և ունենալով այս նոր մտքերը, սկզբունքները և դիրքորոշումները՝ մենք ինքներս ենք համոզվում, թե ինչ է ♥ «*Աստծո բարի և ընդունելի և կատարյալ կամքը՝ հենց այն, ինչը բարի և ընդունելի և կատարյալ է [Նրա աչքերում ձեզ համար]*»:

Կողոսացիների 1.27-ում Պողոսը պնդում է, որ դարերի առեղծվածը Քրիստոսն է մեզանում՝ փառքի հույսը: Ձեր երկնային Հայրը տեսնում է ձեզ փառավորված վիճակում: Նրա տեսիլքը ձեր փառավորված վիճակի մասին այնքա՜ն աներևակայելի է, որ Նա ուղարկեց Իր Հոգին՝ ձեր մեջ բնակվելու համար՝ որպես երաշխիք, որ այդ տեսիլքն անպայման կատարվելու է:

«Փառք» բառը ես սահմանում եմ որպես մեր Աստծո բոլոր գերազանցությունների արտահայտությունը: Հուսացե՛ք Նրան և հավատացե՛ք, որ այս աստվածաշնչյան խոսքերը ձեզ համար են:

Սովորե՛ք դրական, հավատքով լցված և Խոսքի վրա հիմնված դավանություններ անել: Բարձրաձայն ասե՛ք.

«Ես վերափոխվում եմ Աստծո պատկերով՝ փառքի մի մակարդակից՝ մյուսը» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.18): «Քրիստոսն ինձանում իմ հույսն է՝ ավելի փառավոր դառնալու համար: Աստծո Հոգին աստիճանաբար վերափոխում է ինձ ամեն օր: Իմ կյանքը նպատակ ունի: Աստված ծրագիր ունի ինձ համար»:

Հիշե՛ք, որ համաձայն Հռոմեացիների 4.17-ի՝ մենք ծառայում ենք այնպիսի Աստծո, Ով «չլինող բաները լինողի պես է կանչում»:

Ի՞նչ է Աստված ասում մեր մասին Իր Խոսքում:

♥ «…դուք ընտրյալ ցեղ եք, թագավորական քահանայություն, նվիրյալ ազգ [Աստծո] սեփական գնվածները, հատուկ ժողովուրդ, որպեսզի պատմեք Նրա հրաշալի գործերը և ցուցադրեք Նրա առաքինությունները և կատարելությունները, Ով խավարից կանչել է ձեզ Իր զարմանալի լույսի մեջ»:

Ա ՊԵՏՐՈՍ 2.9

Աստված մտադրված է ցուցադրել, հայտնել կամ բացահայտել այն հրաշալի գործերը, առաքինությունները և կատարելությունները, որոնք ծրագրել է ձեզ համար, այնտեղ, որտեղ մարդիկ կարող են տեսնել դրանք:

Սովորե՛ք կրկնել. «Ես կանչված եմ խավարից Աստծո փառավոր լույսի մեջ»:

Մաղաքիա 3.17-ը հայտնում է մեզ, որ մենք Տիրոջ

զարդերն ենք, Նրա հատուկ սեփականությունը և Նրա յուրահատուկ գանձը: Այո, դուք թանկ եք, և դուք նպատակ ունեք: Դուք կոչում ունեք: Աստված հրաշալի ծրագիր ունի ձեր կյանքի համար: Դուք պետք է անեք ձեր ներդրումը պատմության մեջ, բայց պետք է հավատաք, որ կստանաք այս ամենը:

Միգուցե ասեք. «Բայց Զո՛յս, ես այնքա՞ն եմ ձախողվել, այնքա՞ն շատ սխալներ եմ գործել: Ես գիտեմ, որ հիասթափեցրել եմ Աստծուն»:

Փիլիպեցիների 3.13-ում Պողոսը խոստովանեց, որ դեռ չի հասել կատարելության, բայց նա նույնպես դավանեց, որ չի հանձնվում:

> ♥ «Ես չեմ համարում, եղբայրնե՛ր, որ [արդեն] ձեռք եմ բերել և հասել եմ. բայց մեկ բան եմ անում [դա իմ ձգտումն է]. մոռանալով այն, ինչ ետևում է, և ձգտելով առաջ՝ դեպի այն, ինչ առջևում է,
>
> Ես շարունակում եմ առաջ գնալ, որպեսզի հաղթեմ [գերազանց և երկնային] մրցանակը, որի համար Աստված Քրիստոս Հիսուսում վեր է կանչում մեզ»:

Աստված բարի ծրագիր ունի ձեր կյանքի համար. մի՛ ապրեք անցյալում: Լսե՛ք Տիրոջ Խոսքը, որը գրված է Եսայի 43.18,19-ում.

♥ «Մի՛ [ջանալով] հիշեք նախկին բաները, ո՛չ էլ մտածեք հին բաների մասին:

Ահա՛, Ես նոր բան եմ անում: Ահա՛ այն ի հայտ է գալիս. մի՞թե չեք զգում և չգիտեք դա, և մի՞թե ուշադրություն չեք դարձնի դրան: Ես նույնիսկ ճանապարհ կբացեմ ամայի վայրում և գետեր՝ անապատում»:

Եվ, ի վերջո, լսե՛ք, թե ինչ է ասում Աստված Եսայի 43.25-ում. ♥ «*Ե՛ս, Ե՛ս Ինքս հենց Նա եմ, Ով մաքրում և չեղյալ է դարձնում քո անօրինությունները՝ հանուն Ինձ, և Ես չեմ հիշի քո մեղքերը*»:

Աստված այնքա՜ն է ցանկանում, որ դուք դառնաք այնպիսի մարդ, ինչպիսին Նա ստեղծել է ձեզ: Նա ցանկանում է, որ դուք լիարժեք կերպով վայելեք այն կյանքը, որը պատրաստել է ձեզ համար: Իր շնորհքով և ողորմությամբ Նա կամենում է հեռացնել ցանկացած սխալ, որը դուք գործել եք անցյալում: Նա նույնիսկ հոգացել է այն սխալների մասին, որոնք գործելու եք ապագայում:

Կարիք չկա, որ ապրեք՝ զղջալով անցյալի մասին և վախենալով ապագայի համար: Աստված կամենում է օգնել ձեզ բոլոր բնագավառներում, որոնցում դուք օգնության կարիք ունեք:

Եսայի 40.31-ը խոստանում է, որ ♥ «*...նրանք, ովքեր*

սպասում են Տիրոջը [ովքեր ակնկալում են, փնտրում են և հուսացած են Նրան], կփոխեն և կնորոգեն իրենց ուժը և զորությունը. նրանք կբարձրացնեն իրենց թևերը և կսլանան վեր [մոտ Աստծուն]՝ ինչպես արծիվները (սլանում են վեր՝ դեպի արևը). նրանք կվազեն և ուժասպառ չեն լինի, նրանք կքայլեն և չեն թուլանա և չեն հոգնի»:

Ինչպիսի՜ հրաշալի հավաստիացում այն մասին, որ Աստծո սերը հարատև է, և որ Նա հրաշքով կմատակարարի ձեզ՝ հոգալով ամեն կարիք, որը դուք կունենաք ապագայում:

Նրա սքանչելի խոստումներով և թանկ ծրագրերով զինված՝ դիմավորե՛ք ապագան հույսով և վստահությամբ՝ համոզված լինելով, որ Նա կարող է կատարել այն, ինչ խոստացել է (տե՛ս ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 4.21):

Մի՛ նայեք ետ: Նայե՛ք առաջ: Հավատքով առա՛ջ գնացեք:

Հիշե՛ք՝ դուք աստվածային կոչում ունեք և պետք է իրականացնե՛ք այն:

3

Ճանաչե՛ք ձեր արդարությունը Քրիստոսում

Այս գլխում ցանկանում եմ ձեզ հետ կիսվել արդարության մասին որոշ սուրբգրային հատվածներով:

Կա մի երգ, որը կոչվում է «Ես դարձել եմ Աստծո արդարությունը»: Այն պատմում է, որ մենք որդեգրվել ենք Աստծո ընտանիքի մեջ և կանգնած ենք Նրա գահի առջև՝ որպես թագավորական ընտանիքի անդամներ, կատարյալ Հիսուսի մեջ, և որպես ժառանգակիցներ՝ Նրա հետ, առանց մեղքի, գնված Նրա թանկ արյամբ[1]:

Ինչպես գրում է Պողոսը Բ Կորնթացիների 5.21-ում,

1 Բառերը և երաժշտությունը Քրիս Սելմեյերի © 1993, «Life In The Word, Inc.»:

դուք Աստծո արդարությունն եք Հիսուս Քրիստոսում. ♥ «*Որովհետև հանուն մեզ՝ Նա [Աստված] Քրիստոսին՝ Ով մեղք չգիտեր, [փաստորեն] մեղք դարձրեց, որպեսզի Նրանում և Նրա միջոցով մենք կարողանանք դառնալ [օժտված լինել դրանով, լինել օրինակ, դիտվել՝ որպես] Աստծո արդարությունը [այն, ինչ մենք պետք է լինենք՝ հավանության արժանացած և ընդունելի Նրա կողմից, և ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ՝ Նրա բարությամբ]»:*

Սաղմոս 48.10-ում գրված է Տիրոջ մասին. ♥ *«Ինչ-պես որ Քո անունն է, ո՜վ Աստված, այնպես էլ Քո գովասանքն է մինչև երկրի ծայրերը. Քո աջ ձեռքը լիքն է արդարությամբ (իրավունքով և արդարադատությամբ)»:*

Աստծո ձեռքը՝ լի արդարությամբ, պարզած է դեպի ձեզ:

Կորնթացիների առաջին թղթի 1.8-ում Պողոս առաքյալը հավաստիացնում է, որ ♥ «*Նա [Աստված] կհաստատի ձեզ մինչև վերջ [հաստատ կպահի ձեզ, ուժ կտա և կերաշխավորի ձեր արդարացումը. Նա կլինի ձեր երաշխիքը՝ ընդդեմ բոլոր մեղադրանքների և ամբաստանությունների, այնպես որ, դուք կլինեք] անմեղ և անպարսավելի մեր Տեր Հիսուս Քրիստոսի (Մեսիայի) օրը*»:

Գիտե՞ք, թե ինչ է սա նշանակում: Աստծո տե-

սանկյունից, դուք հիմա ճիշտ դիրքում եք: Դուք այնտեղ եք, որ-տեղ Նա ցանկանում է, որ լինեք: Նա պատրաստ կանգ-նած է, որպեսզի պաշտպանի ձեզ սատանայի ստերից, ով եղբայրների չարախոսն է (տե՛ս ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 12.10):

Եթե դուք հավատացել եք Հիսուս Քրիստոսին, Աստված չի նայում ձեզ՝ որպես մեղավորի: Նա պատրաստ է ապացուցել ձեր անմեղությունը:

Լեռան քարոզի մեջ Հիսուսն ասաց Իր հետևորդներին. ♥ «*Օրհնված և բախտավոր և երջանիկ և հոգևորապես բարգավաճ են (այն վիճակում, որում Աստծո վերստին ծնված զավակը վայելում է Նրա բարեհաճությունը և փրկությունը) նրանք, ովքեր քաղց և ծարավ ունեն արդարության հանդեպ (ուղղության և ճիշտ դիրքի՝ Աստծո առջև), որովհետև նրանք լիովին հագեցած կլինեն*» (ՄԱՏԹԵՈՍ 5.6):

Հիսուսն ասում է, որ դուք՝ որպես Աստծո վերստին ծնված զավակ, լիազորված եք ապրելու այնպես, որ վայելեք Աստծո բարեհաճությունը: Դուք կյանքը վայելելու իրավունք ունեք: Սա Աստծո պարգևն է ձեզ:

Սկսե՛ք դավանել. «Ես Աստծո արդարությունն եմ Հիսուս Քրիստոսում»:

Միգուցե դուք փորձել եք ինքներդ արդարանալ Աստծո առջև՝ ձեզ վրա կրելով այդ բեռը: Արդարությունը

չի գալիս այս կերպով: Արդարությունը, ինչպես և փրկությունը, գործ չէ. այն պարգև է. թողե՛ք ձեր ջանքերը և սովորե՛ք վստահել: Հավատացե՛ք, որ Աստված կտա ձեզ Քրիստոսի արդարությունը:

♥ «*Գցի՛ր քո բեռը Տիրոջ վրա [ազատվելով դրա ծանրությունից], և Նա նեցուկ կլինի քեզ. Նա երբեք թույլ չի տա, որ [մշտապես] արդար մարդը շարժվի (սայթաքի, ընկնի կամ ծախողվի)*» (ՍԱՂՄՈՍ 55.22):

Հռոմեացիների 4.1-3-ում Պողոսը խոսում է Աբրահամի արդարության մասին.

♥ «…ի՞նչ ասենք այն մասին, որ Աբրահամը՝ մեր նախահայրը, մարդկորեն խոսելով, [ի՞նչ նա] հայտնաբերեց: [Ինչպե՞ս սա ազդեց նրա դիրքի վրա, և ի՞նչ նա շահեց]:

Որովհետև եթե Աբրահամն արդարացավ (հաստատվեց որպես արդար՝ Աստծո կողմից արդարացվելով մեղքից) բարի գործերով [որոնք նա արեց, ուրեմն] նա պարծենալու հիմք ունի: Բայց ոչ՝ Աստծո առջև:

Որովհետև ի՞նչ է ասում Սուրբ գիրքը: Աբրահամը հավատաց (վստահեց) Աստծուն, և դա գրանցվեց նրա հաշվին՝ որպես արդարություն (արդար կյանք և ճիշտ դիրք Աստծո առջև)»:

Իսկ 23,24 խոսքերում Պողոսը շարունակում է՝ մատնանշելով հետևյալը.

♥ «Բայց «գրանցվեց նրա հաշվին» [բառերը] չգրվեցին միայն նրա համար, այլ [դրանք գրվեցին] նաև մեզ համար: [Արդարությունը, Աստծո կողմից ընդունելի դիրքը] կշնորհվի նաև մեզ և կգրանցվի նաև մեր հաշվին, ովքեր հավատում են (վստահում են, հարում և ապավինում են) Աստծուն, Ով հարություն տվեց Հիսուսին մեռելներից»:

Այլ կերպ ասած՝ այս հատվածում Պողոսը բացատրում է մեզ, որ մենք ստանում ենք արդարությունը հավատալու, ոչ թե գործելու միջոցով:

Երբ մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին, Աստված նայում է մեզ որպես արդարների: Նա բառացիորեն որոշում է կայացնում՝ տեսնել մեզ արդարացված Իր առջև՝ Հիսուսի արյան շնորհիվ: Նա ինքնիշխան Աստված է և իրավունք ունի նման որոշում կայացնել, եթե այդպես է ցանկանում:

Հաջորդ գլխի առաջին խոսքում Պողոսն ամփոփում է իր ասելիքը. ♥ «*Ուրեմն, քանի որ մենք արդարացված ենք (արդար ենք հռչակված և արդար դիրք ենք ստացել Աստծո առջև) հավատքի միջոցով, եկեք [ըմբռնենք այն փաստը, որ մենք ունենք] ունենանք [հաշտության խաղաղությունը՝ այն բռնելու և վայելելու համար] խաղաղություն Աստծո հետ մեր Տեր Հիսուս Քրիստոսի (Մեսիայի, Օծյալի) միջոցով*» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.1):

Արդարությունը չի տրվում մեր անզոր գործերի միջոցով, այլ Հիսուսի կատարած գործի միջոցով:

Սաղմոս 37.25-ում Դավիթը գրում է. ♥ «*Ես երիտասարդ էի և այժմ ծեր եմ, սակայն չտեսա [փոխզիջման չգնացող] արդարին թողնված կամ նրա սերնդին՝ հաց մուրալիս»:*

Ես հավատում եմ, որ եթե մենք՝ ծնողներս, պահենք մեր արդար դիրքն Աստծո առջև Քրիստոսի միջոցով, մեր երեխաները կընդունեն այդ արդարությունը:

Այն երեխաները, որոնց ծնողները մշտապես մեղքի զգացում ունեն, դատապարտություն են զգում և անարժան են համարում իրենց, հիմնականում ընդօրինակում են իրենց ծնողներին:

Նմանապես, եթե ծնողները հասկանում և հավատում են, որ Աստված սիրում է իրենց, որ իրենք հատուկ են Նրա համար, որ Աստված բարի ծրագիր ունի իրենց կյանքերի համար, և որ իրենք արդարացված են Քրիստոսի արյան միջոցով, նրանց երեխաները, ովքեր ապրում են այդ ճշմարտության ծածկոցի տակ, կկրեն իրենց ծնողների հավատքի ազդեցությունը և կընդունեն Հիսուսին և Նրա բոլոր խոստումները:

Առակաց 20.7-ում գրված է, որ ♥ «արդար մարդը վարվում է իր անկեղծությամբ. օրհնված (երջանիկ,

բախտավոր, նախանձելի) են նրա երեխաները նրանից հետո»:

Սաղմոս 37.39-ում նույնպես կարդում ենք. ♥ «*Բայց [մշտապես] արդարների փրկությունը Տիրոջից է. Նա է նրանց Ապաստանը և ապահով Ամրոցը նեղության ժամանակ»:*

Տերը ձեր կողմից է: Նրա Խոսքը ճշմարիտ է, և այն խոստանում է խաղաղություն, արդարություն, ապահովություն և հաղթանակ՝ ընդդեմ հակառակության:

Սովորե՛ք դավանել այս խոստումը Տիրոջից, որը գրված է Եսայի 54.17-ում. ♥ «*...որևէ զենք, որը պատրաստված է քո դեմ, հաջողություն չի ունենա, և ամեն լեզու, որը դատաստանի կբարձրանա քո դեմ, դու սխալ կհանես: Սա [խաղաղությունը, արդարությունը, ապահովությունը, հաղթանակն ընդդեմ հակառակության] Տիրոջ ծառաների ժառանգությունն է [նրանց, որոնց մեջ վերարտադրվել է Տիրոջ կատարյալ Ծառան]. սա այն արդարությունն է կամ արդարացումն է, որը նրանք ստանում են Ինձնից [սա այն է, ինչը Ես տալիս եմ նրանց՝ որպես իրենց արդարացումը],- ասում է Տերը»:*

Սաղմոս 34.15-ում Դավիթն ասում է.

♥ «Տիրոջ աչքերը դեպի [փոխզիջման չգնացող] արդարներն են, և Նրա ականջները բաց են նրանց աղաղակին»:

Սա բառացիորեն նշանակում է, որ Աստված տեսնում և լսում է ձեզ, որովհետև Նա սիրում է ձեզ:

Իսկ 17,19 և 22 խոսքերում Դավիթը շարունակում է.

♥ «Երբ արդարներն աղաղակում են օգնության համար, Տերը լսում և ազատում է նրանց բոլոր վշտերից և նեղություններից…

Շատ չարիքներ են [մշտապես] հակառակվում արդարին, բայց Տերն ազատում է նրան այդ ամենից…

Տերը փրկում է Իր ծառաների կյանքերը, և Նրանում ապաստան գտածներից և Նրան վստահողներից ոչ մեկը դատապարտված չի լինի կամ մեղավոր չի համարվի»:

Այն պահից, երբ ընդունեցիք Հիսուսին՝ որպես Փրկիչ, աճում եք Նրանում: Կարելի է ասել, որ դուք ընթացքի մեջ եք: Անցնելով ձեր ընթացքը՝ որոշ սխալներ կգործեք: Ես հավատում եմ, որ նույնիսկ եթե ձեր գործերը կատարյալ չեն, բայց ձեր սիրտը կատարյալ է Աստծո հանդեպ, Նա կատարյալ է համարում ձեզ, քանի դեռ դուք ձեր ընթացքի մեջ եք:

Եսայի 54.14-ում Տերը հռչակում է. ♥ «*Դու կհաստատես քեզ արդարությամբ (ուղղությամբ, համապատասխան Աստծո կամքին և կարգին). ճնշման և կոր-*

ծանման մասին մտքից, որովհետև դու չես վախենա, դու հեռու կլինես նույնիսկ սարսափից, որովհետև այն մոտ չի գա քեզ»:

Առակաց 28.1-ում գրված է, որ փոխզիջման չգնացող արդարը առյուծի պես համարձակ է: Երբ դուք գիտեք, որ արդար եք Քրիստոսի միջոցով, երբ դուք ճշմարիտ հայտնություն ունեք այս բնագավառում, դուք չեք ապրի վախի և սարսափի մեջ, որովհետև արդարությունը համարձակություն է առաջացնում:

♥ «Որովհետև մենք չունենք այնպիսի Քահանայապետ, Ով անկարող է հասկանալ և կարեկցել և կիսել մեր զգացմունքները՝ մեր տկարությունների և թուլություններ-ի և գայթակղության հարձակումներին ենթակա լինելու մասին, բայց Այնպիսին, Ով գայթակղվել է ամեն առումով, ինչպես և մենք, սակայն առանց մեղք գործելու:

Ուրեմն, եկե՛ք վստահությամբ և համարձակությամբ մոտենանք շնորհքի (Աստծո՝ ոչ ըստ արժանիքի տրված բարեհաճությանը մեզ՝ մեղավորներիս) գահին, որ մենք ընդունենք ողորմություն [մեր ձախողումների համար] և շնորհք գտնենք՝ օգնելու ճիշտ ժամանակին ամեն կարիքի համար [պատշաճ օգնություն և ժամանակին օգնություն, որը գալիս է հենց այն պահին, երբ ունենք դրա կարիքը]»:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.15,16

Մենք կարող ենք համարձակ մոտենալ Աստծո շնորհքի գահին, ոչ թե մեր, այլ Նրա կատարելության պատճառով: ♥ «*Ուրեմն, քանի որ այժմ մենք արդարացված ենք (արդարացվել և բերվել ենք Աստծո հետ ճիշտ փոխհարաբերության) Քրիստոսի արյունով, որքա՜ն ավելի [հաստատ է, որ] մենք կփրկվենք Նրանով՝ Աստծո վրդովմունքից և զայրույթից*» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.9):

Միգուցե ամբողջ կյանքում մտածել եք. «Ի՞նչն է սխալ իմ մեջ»:

Եթե այդպես է, ես բարի լուր ունեմ ձեզ համար. դուք արդարացվե՞լ եք:

Այժմ ձեր կյանքում կա մեկ ճիշտ բան:

Ես խրախուսում եմ մարդկանց՝ մշտապես դավանել սա. «Միգուցե ես այնտեղ չեմ, որտեղ պետք է լինեմ, բայց գոհությո՜ւն Աստծուն, ես նաև այնտեղ չեմ, որտեղ նախկինում էի: Ես լավ վիճակում եմ և շարունակում եմ իմ ընթացքը»:

Հիշե՛ք, որ փոխվելը՝ ընթացք է, և դուք այդ ընթացքի մեջ եք: Աստված արդար է համարում ձեզ, մինչ դուք կփոխվեք:

Դուք արդար եք: Սա այն վիճակն է, որում Աստված հաստատել է ձեզ Հիսուսի արյան միջոցով:

Ձեր կյանքում տեղի ունեցող փոփոխությունները

մատնանշում են այն արդար դիրքը, որն Աստված արդեն տվել է ձեզ հավատքի միջոցով:

Փա՜ռք Աստծուն:

Որքա՜ն հզոր է սա:

Ստանալով Աստծո սերը և արդարությունը՝ դուք կազատվեք անապահովության զգացումից և մերժվածության վախից:

Հենց հիմա կա՛նգ առեք և հռչակե՛ք. «Ես Աստծո արդարությունն եմ Հիսուս Քրիստոսում»: Ես խրախուսում եմ ձեզ՝ դավանել այս ճշմարտությունն օրական մի քանի անգամ:

Աստվածաշնչի Արարատ թարգմանության մեջ Հռոմեացիների 14.17-ում Պողոս առաքյալն ասում է, որ ♥ «Աստծո արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ՝ արդարություն և խաղաղություն և *ուրախություն Սուրբ Հոգով»:* Արդարությունը խաղաղություն է բերում, իսկ խաղաղությունը՝ ուրախություն:

Եթե դուք չեք ունեցել խաղաղություն և ուրախություն, հավանաբար, դուք չեք ունեցել հայտնություն ձեր արդարության մասին: Աստված իսկապես ցանկանում է օրհնել ձեզ և՛ ֆիզիկապես, և՛ ֆինանսապես:

Այնուամենայնիվ, մեղքի զգացում և դատապարտություն ունեցող մարդկանց մեծամասնությունն այդպես էլ չի ստանում ճշմարիտ բարգավաճում: Աստվա-

ծաշունչը սովորեցնում է մեզ, որ արդարները, այսինքն՝ այն մարդիկ, ովքեր գիտեն, որ արդար են, բարգավաճում են և ապահով են:

Գիտե՞ք, թե ինչ է ասում Տերը ձեր մասին: Սաղմոս 1.3-ում Նա ասում է, որ այն մարդը, ում բերկրանքը Տիրոջ օրենքի և Նրա խրատների մեջ է, նման է ջրերի գետերի մոտ տնկված ծառի, որը ժամանակին է բերում իր պտուղը: Ձեր տերևը չի թառամի, և ամեն ինչ, որ անեք, կբարգավաճի և հաջողություն կունենա: Մտորե՛ք այն ամենի շուրջ, որ դուք ճիշտ դիրք ունեք Աստծո առջև, ոչ թե այն ամենի, ինչը սխալ է ձեր կյանքում:

Ինչպես արդեն տեսանք Հեսու 1.8-ում, ♥ «*Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա քո բերանից, այլ դու պետք է մտորես դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանաս պահել և կատարել համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ դու բարգավաճ կդարձնես քո ընթացքը, և այդ ժամանակ դու իմաստուն կերպով կվարվես և բարի հաջողություն կունենաս»:*

Հիշե՛ք, որ Սաղմոս 1.2,3-ում գրված է, որ եթե դուք օր ու գիշեր մտորեք Աստծո Խոսքի շուրջ, դուք կլինեք հաստատ տնկված ծառի պես, որը պտուղ է բերում և հաջողվում է իր բոլոր գործերում: Մտորե՛ք Խոսքի շուրջ և խոսե՛ք Խոսքը: Երբ սատանան հարձակվում է ձեր մտքի վրա, հակահարձակո՛ւմ գործեք Աստծո

Խոսքով: Հիշե՛ք, որ Հիսուսը պարտության մատնեց սատանային՝ խոսելով Խոսքը: Նա ասում էր. ♥ «*Գրվա՛ծ է…*» (ՂՈՒԿԱՍ 4.4,8,10):

Առակաց 18.10-ում գրված է. ♥ «*Տիրոջ անունը ամուր աշտարակ է. [մշտապես] արդարը վազում է դրա մեջ և ապահով է, բարձրում է [չարիքից վեր] և ուժեղ է»:*

Սաղմոս 72.7-ում գրված է, որ արդարը ♥ «*կծաղկի, և խաղաղությունը կշատանա, մինչև որ այլևս լուսին չլինի»:* Ընդունե՛ք ձեր արդարությունն Աստծո առջև, որպեսզի ծաղկեք խաղաղության մեջ:

Միգուցե մտածում եք. «Բայց ի՞նչ կասեք բոլոր սարսափելի արարքների մասին, որոնք ես գործել եմ»:

Ցանկանում եմ Եբրայեցիների 10.16-18-ից հիշեցնել ձեզ մի խոսք, որն Աստված ասաց Իր ժողովրդի մասին.

> ♥ «Սա այն համաձայնությունն է [Կտակարանը, Ուխտը], որը ես հաստատում և կնքում եմ նրանց հետ այս օրերից հետո,- ասում է Տերը. Ես կդրոշմեմ Իմ օրենքները նրանց սրտերի վրա, և ես կփորագրեմ դրանք նրանց մտքերի վրա (նրանց ներքին մտքերի և հասկացողության վրա),
> …նրանց մեղքերը և նրանց օրինազանցությունը այլևս չեմ հիշի:

Այսպիսով, որտեղ կա սրանց [մեղքերի և օրինազանցության] բացարձակ թողություն (պատիժը ներելը

և չեղյալ դարձնելը), այլևս որևէ զոհաբերություն չի մատուցվում՝ մեղքը քավելու համար»:

Այլ կերպ ասած՝ ձեր մեղքերը, ինչպես նաև դրանց արժանի պատիժը, լիովին չեղյալ են արվել: Քանի որ Հիսուսի գործն անթերի և ամբողջական էր, չկա ոչինչ, որ դուք կարող եք անել, որպեսզի հատուցեք ձեր մեղքերի համար: Աստծուն հաճելի միակ բանը, որը կարող եք անել, հավատքով ընդունելն է այն ամենը, ինչ Նա ցանկանում է ձրիաբար տալ ձեզ:

Եբրայեցիների 10.19,20-ում գրված է, որ Հիսուսն Իր զոհով բացեց ♥ «*թարմ (նոր) և կենդանի ճանապարհ*», որով մենք կարող ենք լցված լինել ազատությամբ և վստահությամբ՝ Նրա ներկայության մեջ մտնելու համար, ♥ «*այն զորությամբ և առաքինությամբ*», որոնք Նրա արյան մեջ են:

Այլևս կարիք չկա, որ ձեր և Աստծո միջև բաժանող վարագույր լինի:

Ինչպիսի՜ փառավոր լուր:

Դուք կարող եք **համարձակ** ներս մտնել և շփվել Աստծո հետ, որովհետև ձեր մեղքը չեղյալ է արվել, հեռացվել և մոռացվել է:

Ուրախացե՜ք: Դուք Աստծո արդարությո՛ւնն եք Քրիստոսի մեջ (տե՛ս Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ 5.21):

4

Հաղթահարե՛ք վախը ձեր կյանքում

Դուք ունե՞ք վախեր:

«Մի՛ վախեցիր, Իմ զավա՛կ» կոչվող երգի մեջ Տերը խոսում է այս կյանքի խոսքերը.

«Մի՛ վախեցիր, Իմ զավա՛կ,
Ես միշտ քեզ հետ եմ:
Ես զգում եմ ամեն մի ցավ
և տեսնում եմ արցունքներդ:
Մի՛ վախեցիր, Իմ զավա՛կ,
Ես միշտ քեզ հետ եմ:
Ես գիտեմ՝ ինչպես հոգալ նրանց մասին,
ովքեր պատկանում են Ինձ»[1]:

Տիմոթեոսի երկրորդ թղթի 1.7-ում Պողոս առաքյալը

1. © 1993, «Some-O-Dat Music» (Word Music): Բոլոր իրավունքները պաշտպանված են: Օգտագործված է ըստ թույլտվության:

գրում է իր երիտասարդ աշակերտին՝ հորդորելով նրան՝ չվախենալ և կատարել իր ծառայությունը. ♥ «*Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի (վախկոտության, անվճռական և ստորաքարշ և շողոքորթող վախի), այլ [Նա տվեց մեզ] զորության և սիրո և հանդարտ ու հավասարակշռված մտքի և կարգապահության և ինքնավերահսկողության [հոգի]»:*

Հիշե՛ք այս խոսքը: Անգի՛ր սովորեք այն և կրկնե՛ք ամեն անգամ, երբ անհանգիստ ու վախեցած լինելու պատճառ կունենաք:

Վախն Աստծուց չէ: Սատանան է, որ ցանկանում է լցնել ձեր սիրտը վախով: Աստված ծրագիր ունի ձեր կյանքի համար: Ընդունե՛ք Նրա ծրագիրը՝ հավատալով Նրան: Բայց հիշե՛ք, որ սատանան նույնպես ծրագիր ունի ձեր կյանքի համար. դուք ստանում եք նրա ծրագիրը վախի միջոցով:

Սաղմոսերգու Դավիթը գրում է. ♥ «*Ես փնտրեցի Տիրոջը [հարցրի Նրան] և խնդրեցի Նրան [իմ կարիքի մեջ և Նրա Խոսքի իշխանության հիման վրա], և Նա լսեց ինձ և ազատեց իմ բոլոր վախերից*» (ՍԱՂՄՈՍ 34.4):

Հիսուսը ձեր Փրկիչն է: Եթե ջանասիրաբար փնտրեք Նրան, Նա կազատի ձեզ բոլոր վախերից: Հովհաննես 14.27-ում Նա ասաց Իր վախեցած աշակերտներին. ♥

«…Թույլ մի՛ տվեք, որ ձեր սրտերը տագնապեն, ո՛չ էլ թույլ տվեք, որ դրանք վախենան [Դադարե՛ք թույլ տալ ինքներդ ձեզ՝ հուզվել և անհանգստանալ, և թույլ մի՛ տվեք ձեզ՝ վախենալ և երկչոտ, ճնշված և մտահոգ լինել]»:

Սա նշանակում է, որ դուք պետք է խիստ դիրք զբաղեցնեք ընդդեմ վախի: Այսօր որոշում կայացրեք, որ այլևս թույլ չեք տալու վախի ոգուն՝ մոտենալ ձեզ և իշխել ձեր կյանքում:

Սաղմոս 56.3,4-ում Դավիթն ասաց Տիրոջ մասին.

♥ «Երբ էլ վախենամ, ես կվստահեմ և կհուսամ և կապավինեմ Քեզ:

Աստծով [Նրա օգնությամբ] ես կգովեմ Նրա Խոսքը. ես Աստծուն եմ ապավինում և վստահաբար հուսացած եմ Նրան, ես չեմ վախենա. ի՞նչ կարող է անել մարդը, ով մարմին է»:

Եսայի 41.10-ում Տերը հավաստիացնում է Իր ժողովրդին. ♥ «*Մի՛ վախեցիր [վախենալու ոչինչ չկա], որովհետև ես քեզ հետ եմ. սարսափահար մի՛ նայիր շուրջդ և մի՛ զարհուրիր, որովհետև ես քո Աստվածն եմ: Ես կզորացնեմ և կամրացնեմ քեզ՝ ընդդեմ քո դժվարությունների, այո՛, ես կօգնեմ քեզ. այո՛, ես բարձր կպահեմ*

քեզ և կպահպանեմ քեզ Իմ [հաղթական] ուղղության և արդարության աջ ձեռքով»:

Եբրայեցիների 13.5-ի հեղինակն զգուշացնում է երկրային ունեցվածքին և ապահովությանը ձգտելու մասին՝ հիշեցնելով մեզ. ♥ «*...որովհետև Նա [Աստված] Ինքն է ասել՝ Ես ոչ մի կերպով չեմ ձախողի քեզ, ո՛չ էլ կլքեմ քեզ, ո՛չ էլ կթողնեմ քեզ առանց աջակցության:* ***[Ես չեմ], [Ես չեմ], [Ես չեմ]*** *թողնի քեզ անօգնական և չեմ լքի, ո՛չ էլ հուսախաբ կանեմ քեզ (չեմ թուլացնի Իմ ձեռքը քո գլխից) ո՛չ մի չափով [Անկասկած՝ ո՛չ]»:*

Հաջորդ՝ վեցերորդ խոսքում հեղինակը շարունակում է. ♥ «*Այնպես որ, մենք մխիթարվում և խրախուսվում ենք և վստահաբար ու համարձակությամբ ասում ենք՝ Տերն իմ Օգնականն է, ես չեմ համակվի տագնապով [ես չեմ վախենա կամ ահ չեմ զգա կամ չեմ սարսափի]: Ի՞նչ կարող է անել ինձ մարդը»:*

Վախը **կեղծիք է, որն իրական է թվում**: Թշնամին ցանկանում է, որ ձեր ապագան ձախողվի, բայց Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ անկախ այն բանից, թե ինպիսին են մեր ներկա հանգամանքները, կամ որքան վատ է ամեն ինչ թվում՝ Աստծո հետ անհնարին ոչինչ չկա (տե՛ս ՄԱՐԿՈՍ 9.17-23):

Եսայի 41.13-ը պատվիրում է մեզ. ♥ «*Որովհետև Ես՝ Տերս՝ քո Աստվածը, կպահեմ քո աջ ձեռքը, ասելով քեզ՝*

մի՛ վախեցիր, ես կօգնե՛մ քեզ» (KJV): Սա նշանակում է, որ դուք չպետք է վախենաք վատ լուրերից: Շարունակե՛ք վստահել Աստծուն: Նա կարող է այնպես անել, որ ամեն ինչ բարուն գործակից լինի ձեզ համար:

Հռոմեացիների 8.28-ում Պողոս առաքյալը հիշեցնում է մեզ, որ ամեն բան միասին գործում է ի բարին այն մարդկանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են՝ համաձայն Նրա ծրագրի և նպատակի:

Եսայի 43.1-3-ում (TLB) գրված է. ♥ «*Բայց հիմա, Ո՛վ Իսրայել,- այսպես է ասում Տերը՝ Քեզ ստեղծողը՝ մի՛ վախեցիր, որովհետև ես փրկագնել եմ քեզ. ես անունովդ եմ կանչել քեզ. դու Իմն ես: Երբ անցնես խորը ջրերով և մեծ նեղությունով, ես քեզ հետ կլինեմ: Երբ անցնես դժվարության գետերով, դու չես խորտակվի: Երբ քայլես ճնշվածության կրակի միջով, դու չես այրվի՝ դրա բոցերը չեն սպառի քեզ: Որովհետև ես Տերն եմ՝ քո Աստվածը, քո Փրկիչը, Իսրայելի Սուրբը…*»:

Սովորե՛ք բարձրաձայն դավանել այս խոսքերը վախի մասին: Բարձրաձայն խոսե՛ք դրանք, երբ մենակ եք: Թող հոգևոր աշխարհն իմանա, որ դուք մտադրված չեք ապրել վախի մեջ: Հռչակելով Աստծո Խոսքը՝ դուք ցույց եք տալիս սատանային, որ չեք պատրաստվում ապրել տանջալի կյանքով:

Հիշե՛ք՝ Աստվածաշնչում ասվում է, որ վախի մեջ տանջանք կա (տե՛ս Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18): Համաձայն Եփեսացիների 3.12,13-ի՝ Հիսուսը մահացավ, որպեսզի ազատեր մեզ տանջանքից: Այս հատվածում Պողոսն ասում է մեզ, որ Քրիստոս Հիսուսի հանդեպ ունեցած հավատքի պատճառով…

♥ «…մենք համարձակվում ենք ունենալ ազատ մուտքի (Աստծուն ազատությամբ և առանց վախի մոտենալու անսահմանափակ հնարավորություն) խիզախություն (քաջություն և վստահություն):

Այնպես որ, խնդրում եմ ձեզ, որ չհիասթափվեք [չքուլանաք կամ չվհատվեք վախի միջոցով]…»:

Սաղմոս 46.1,2-ը հիշեցնում է մեզ.

♥ «Աստված մեր Ապաստանն է և Ուժը [զորեղ և անխոցելի՝ գայթակղության համար], մշտապես ներկա և վստահելի օգնություն՝ նեղության մեջ:

Այդ իսկ պատճառով, մենք չենք վախենա, թեև երկիրը փոխվի, և սարերը ցնցվեն ծովերի մեջտեղում»:

Հեսուի գրքի առաջին գլխում Աստված շարունակ խրախուսում էր Հեսուին՝ ասելով. ♥ «*Եղի՛ր ուժեղ (վստահ) և խիզախ*» (խոսք 6), և հավաստիացնում էր նրան. ♥ «*Տերը՝ քո Աստվածը, քեզ հետ է՝ ուր էլ գնաս*»

(խոսք 9): Այդ իսկ պատճառով, դուք չպետք է վախենաք: Տերն ասում է ձեզ միևնույն բանը, ինչ՝ Հեսուին:

Աստված ձեզ հետ է: Նա երբեք չի թողնի ձեզ, և ո՛չ էլ կլքի ձեզ (տե՛ս ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.5): Նրա աչքերը ձեզ վրա են ամեն ժամանակ (ՍԱՂՄՈՍ 33.18): Նա դաջել է ձեր պատկերն Իր երկու ձեռքերի ափերին (ԵՍԱՅԻ 49.16): Այդ իսկ պատճառով, դուք չպետք է վախենաք: Ուժե՛ղ եղեք, վստա՛հ եղեք, խիզա՛խ եղեք, մի՛ վախեցեք:

Մատթեոս 6.34-ում՝ Լեռան քարոզի մեջ, Հիսուսը սովորեցնում էր Իր հետևորդներին. «Այնպես որ, հոգս մի՛ արեք կամ մի՛ անհանգստացեք ապագայի համար, որովհետև ապագան կունենա իր հոգսերը և անհանգստությունները: Բավական է ամեն օրվա համար իր նեղությունը»:

Մատթեոս 8.23-27-ում կարդում ենք, թե ինչպես աշակերտները վախեցան ծովի ալեկոծությունից. ♥ «*Եվ Նա ասաց նրանց՝ ինչո՞ւ եք երկչոտ և վախեցած, ո՛վ սակավ հավատք ունեցողներ: Հետո Նա ոտքի ելավ և հանդիմանեց քամիներին և ծովին, և մեծ ու հրաշալի հանդարտություն (կամ՝ կատարյալ խաղաղություն) եղավ*» (խոսք 26):

Ղուկաս 12.25,26-ում (TLB) Հիսուսը հարցնում է. ♥ «*...ի՞նչ օգուտ անհանգստանալուց: Ի՞նչ է դա տալիս: Արդյո՞ք դա ձեր կյանքը կավելացնի թեկուզ մեկ օրով:*

Իհարկե՝ ո՛չ: Եվ եթե անհանգստությունը չի կարող նույնիսկ նման փոքր բան անել, ի՞նչ օգուտ ավելի մեծ բաների համար անհանգստանալուց»:

«*Մի՛ վախեցիր*»,- ասում է Եսային 54.4-ում (TLB) - ♥ *«Դու այլևս չես ապրի ամոթի մեջ: Քո երիտասարդության ամոթը և քո այրիության տրտմությունն այլևս չեն հիշվի, որովհետև քո Արարիչը կլինի քո «ամուսինը»: Զորքերի Տեր է Նրա անունը. Նա՛ է քո Փրկիչը՝ Իսրայելի Սուրբը, ամբողջ երկրի Աստվածը»:*

Իսկ Եսայի 35.4-ում գրված է. ♥ «*Ասե՛ք նրանց, ովքեր երկչոտ և շտապող սիրտ ունեն՝ ուժե՛ղ եղեք, մի՛ վախեցեք: Ահա՛, ձեր Աստված կգա վրիժառությամբ, Աստծո հատուցմամբ: Նա կգա և կփրկի ձեզ»:*

Խնդրե՛ք Աստծուն՝ զորացնել ձեզ ներսի մարդու մեջ, որպեսզի Նրա կարողությունը և զորությունը լցնեն ձեզ, և դուք չպարտվեք՝ վախին տեղ տալու գայթակղությունից (տե՛ս ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.16):

Ես ցանկանում եմ ձեզ հետ կիսվել վախի մասին մեծ հայտնությամբ, որը Տերը տվել է ինձ: Երբ Տերն Իր Խոսքում ասում է մեզ. ♥ «*Մի՛ վախեցիր*», Նա չի պատվիրում մեզ, որ չունենանք վախի զգացում: Իրականում Նա ասում է. «Երբ դու վախ ես զգում, այսինքն՝ երբ սատանան քեզ վրա հարձակվում է

վախով, ետ մի՛ գնա և մի՛ փախչիր: Փոխարենը՝ առա՛ջ գնա, չնայած որ վախենում ես»:

Տարիներ շարունակ, երբ վախի զգացողություն եմ ունեցել, մտածել եմ, որ վախկոտ եմ: Այժմ ես սովորել եմ, որ վախը հաղթահարելու համար անհրաժեշտ է երես առ երես բախվել վախին, հակառակվել դրան և անցնել դրա միջով՝ կատարելով այն, ինչ Աստված ասել է, նույնիսկ եթե պետք է վախենալով անել դա:

Ըստ «Լիվինգ Բայբլ» թարգմանության՝ Սաղմոս 34.4-ում Դավիթն ասում է Տիրոջ մասին. ♥ «*Որովհետև ես աղաղակեցի՝ Նրան, և Նա պատասխանե՛ց ինձ: Նա փրկեց ինձ իմ բոլոր վախերից»:* Իսկ Հովհաննեսը հիշեցնում է մեզ. ♥ «*Սիրո մեջ վախ չկա՝ [ահ գոյություն չունի], բայց հասուն (ամբողջական, կատարյալ) սերը դուրս է անում վախը դռներից և վտարում է սարսափի ցանկացած հետք: Որովհետև վախն իր հետ բերում է միտք պատժի մասին, և [այնպես որ] նա, ով վախենում է, չի հասել սիրո ամբողջական հասունությանը [դեռ չի հասել սիրո ամբողջական կատարելությանը]»* (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18):

Հիշե՛ք. Աստված սիրո՛ւմ է ձեզ: Եվ քանի որ Նա սիրում է ձեզ և հոգում է ձեր մասին կատարյալ սիրով, դուք կարող եք ապրել վախից ազատ:

Միգուցե այս պահին այնքա՞ն վախեր ունեք, որ

վախից ազատ կյանքն անհնարին երազանք է թվում ձեզ: Այդ դեպքում, հիշե՛ք հետևյալը. Աստված կարող է ամբողջովին ազատել ձեզ ցանկացած խնդրից, անմիջապես, բայց հաճախ Նա աստիճանաբար է ազատում մեզ: Այդ իսկ պատճառով, քաջալերվե՛ք՝ իմանալով, որ Աստված աշխատում է ձեզ հետ: Աստված բարի գործ է սկսել ձեզանում, և Նա ավարտին կհասցնի այն (տե՛ս ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 1.6):

♥ «*Տերն իմ լույսն է և իմ փրկությունը. ես ումի՞ց պետք է վախենամ*»,- հարցնում է սաղմոսերգուն Սաղմոս 27-ի 1-ին խոսքում (TLB) - ♥ «*Երբ չար մարդիկ գան՝ ինձ կործանելու համար, նրանք կսայթաքեն և կընկնեն: Այո՛, թեև զորավոր բանակ դուրս գա ինձ դեմ, իմ սիրտը վախ չի՛ իմանա: Ես վստահ եմ, որ Աստված կփրկի ինձ*»:

Նույն գլխի 5 և 6 խոսքերում Դավիթը շարունակում է՝ որ երբ նեղություն գա, Աստված կթաքցնի իրեն: Աստված վեր կհանի իրեն բարձր ժայռի վրա՝ հեռու իր բոլոր թշնամիներից: Նա ավելացնում է, որ զոհեր կմատուցի Տիրոջը և մեծ ուրախությամբ կգովերգի Նրան:

Աստված կանի ձեզ համար նույնը, ինչ արեց Դավթի համար: Հավատացե՛ք Տիրոջը: Նա կարո՛ղ է ազատել ձեզ ամեն չարից:

Լսե՛ք, թե ինչ ասաց Տիրոջ հրեշտակը Դանիելին՝ հավաստիացնելով, որ նրա աղոթքները լսվել են. ♥ «*Մի՛ վախեցիր, Դանիե՛լ, որովհետև առաջին օրվանից, երբ դու ուղղեցիր քո միտքը և սիրտը, որ հասկանաս և խոնարհեցնես քեզ քո Աստծո առջև, քո խոսքերը լսվեցին, և ես եկա քո խոսքերի պատճառով [ի պատասխան դրանց]*» (ԴԱՆԻԵԼ 10.12):

Սատանան կփորձի ասել ձեզ, որ Աստված չի լսել ձեր աղոթքը և չի պատասխանի ձեզ: Հիշե՛ք, որ Աստծո Խոսքը՝ Հոգու սուրն է (տե՛ս ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.17): Դուք պարտության եք մատնում թշնամուն Խոսքի սրով: Թաքցրե՛ք այս խոսքերը ձեր սրտում, մտորե՛ք դրանց շուրջ օր ու գիշեր:

Դուք կկարողանաք հաղթել թշնամուն միայն Աստծո Խոսքով: Դուք կբացահայտեք սատանայի ստերը միայն՝ երբ գիտեք Աստծո Խոսքը: Դավանե՛ք Աստծո Խոսքը, և այն հաղթանակ կբերի ձեզ:

Միգուցե դուք վախենում եք խոսել ձեր ղեկավարի հետ: Միգուցե ձեզ մեղադրել են ինչ-որ բանում, և դուք մտածում եք, թե ինչ պետք է ասեք, որպեսզի պաշտպանեք ձեզ: Լսե՛ք Հիսուսի Խոսքը Ղուկաս 12.11,12-ում (TLB). ♥ «*Եվ երբ դուք դատավարության բերվեք… ղեկավարների և իշխանավորների առջև… հոգս մի՛ արեք այն մասին, թե ինչ պետք է ասեք ձեր*

պաշտպանության համար, որովհետև Սուրբ Հոգին կտա ձեզ ճիշտ բառեր, հենց այն ժամանակ, երբ այդտեղ կանգնած լինեք»:

Երբ վախին տեղի տալու գայթակղություն ունենաք, կրկնե՛ք Սաղմոս 23.1-6-ը (ԱՐԱՐԱՏ): Դավանե՛ք, որ հավատում եք Տիրոջը, Նրա մատակարարմանը և մշտական հոգատարությանը ձեր կյանքում:

«Տե՛րն է իմ հովիվը, և կարոտություն չեմ ունենա:
Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ տանում է ինձ:

Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարության շավիղներում՝ Իր անվան համար:

Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես. Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ:

Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. Դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է:

Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը կբնակվեմ շա՜տ երկար ժամանակ»:

Ամփոփում. Հաստա՛տ կանգնեք

Այս գրքում ձեզ հետ կիսվում եմ աստվածաշնչյան խոսքերով Աստծո սիրո մասին, այն փառավոր ապագայի մասին, որը Նա ծրագրել է ձեզ համար, Քրիստոսի մեջ ձեր արդարության և վախից ազատ լինելու մասին:

Բոլոր խոստումները, որոնք գրված են այս խոսքերում, ձեր ժառանգությունն են՝ որպես Տիրոջ ծառայի: Այնուամենայնիվ, դուք պետք է իմանաք, որ սատանան փորձելու է գողանալ դրանք ձեզնից: Նա ցանկանում է, որ դուք վերադառնաք գերության մեջ:

Ահա թե ինչու է Պողոս առաքյալը պատվիրում մեզ Գաղատացիների 5.1-ում (ԱՐԱՐԱՏ). ♥ «*Արդ այն ազատությունով, որ Քրիստոսը մեզ ազատեց, հաստա՛տ կանգնեք և դարձյալ ծառայության լծի տակ մի՛ մտեք»:*

Հաղթական քրիստոնեական կյանքի բանալիներից են կայունությունը, համբերությունը և հարատևությունը:

♥ «Ուրեմն, դեն մի՛ գցեք ձեր անվախ վստահությունը, որովհետև այն մեծ և փառավոր վարձատրության հատուցում ունի:

Որովհետև դուք հաստատ համբերության և հարատևության կարիք ունեք, որպեսզի կատարեք և ամբողջական ավարտին հասցնեք Աստծո կամքը, և սրանով իսկ ընդունեք ու վերցնեք [և լիարժեք կերպով վայելեք] այն, ինչ խոստացված է»:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.35,36

Ձեր երկնային Հայրը ցանկանում է, որ դուք լիարժեք կերպով վայելեք այն, ինչ Հիսուս Քրիստոսն Իր արյունով գնել է ձեզ համար: Վճռակա՛ն եղեք: Հենց հիմա որոշո՛ւմ կայացրեք, որ երբեք չեք հանձնվի: Դավանե՛ք հաջորդ բաժնում բերված աստվածաշնչյան խոսքերը, մինչև որ դրանք դառնան ձեր մասը:

Մշտապես հիշե՛ք, որ Աստված սիրում է ձեզ, և որ Նրա Խոսքի մեջ կյանք կա:

Սուրբգրային դավանություններ

*Ներածություն. Ապծո Խոսքը**

«Աստված ուղարկում է Իր Խոսքը և բժշկում է ինձ ու փրկում է կործանման գուբից» (ՍԱՂՄՈՍ 107.20):

Օրհնված (երջանիկ, բախտավոր, բարգավաճ և նախանձելի) եմ ես, որովհետև չեմ վարվում և չեմ ապրում անաստված մարդկանց խորհրդի մեջ [հետևելով նրանց խորհրդին, նրանց ծրագրերին և նպատակներին], ո՛չ էլ կանգնում եմ [ենթարկվելով և առանց հակառակվելու] այն ճանապարհի վրա, որտեղ քայլում են մեղավորները, ո՛չ էլ նստում եմ այնտեղ [լարվածությունս թուլացնելու և հանգստանալու հա-

* Նշում. հեղինակն անձնականացրել է այս դավանություններն ընթերցողի համար՝ ներկայացված աստվածաշնչյան խոսքերը դարձնելով առաջին դեմքով:

մար], որտեղ հավաքվում են արհամարհող [և ծաղրող] մարդիկ:

Բայց իմ բերկրանքը և ցանկությունը Տիրոջ օրենքի մեջ է, և Նրա օրենքի (Աստծո հրահանգների, ցուցումների և ուսմունքների) շուրջ ես, սովորության համաձայն, մտորում եմ (խորհրդածում և սովորում եմ) օրվա ընթացքում և գիշերվա ընթացքում:

«Եվ ես կլինեմ ծառի պես, որն ամուր տնկված է [և խնամվում է] ջրերի հոսանքների մոտ՝ պատրաստ պտուղ բերելու իր ժամանակին. իմ տերևը նույնպես չի կորցնի իր գույնը կամ չի թառամի, և այն ամենը, ինչ անում եմ, կհաջողվի [և ավարտին կհասցվի]» (ՍԱՂՄՈՍ 1.1-3):

«Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա իմ բերանից, այլ ես պետք է մտորեմ դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանամ պահել և կատարել՝ համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ ես բարգավաճ կդարձնեմ իմ ընթացքը, և այդ ժամանակ իմաստուն կերպով կվարվեմ և բարի հաջողություն կունենամ» (ՀԵՍՈՒ 1.8):

«Խոսքը շատ մոտ է ինձ, իմ բերանում և իմ մտքում և իմ սրտում, որպեսզի կարողանամ կատարել այն» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 30.14):

«Այսպես կլինի Աստծո Խոսքը, որը դուրս է գալիս

իմ բերանից. այն դատարկ [առանց որևէ օգուտ տալու, զուր] չի վերադառնա Նրա մոտ, այլ կիրականացնի այն, ինչը հաճեցնում է Նրան, և ինչը Նրա նպատակն է, և կհաջողվի այն բանում, ինչի համար Նա ուղարկեց այն» (ԵՍԱՅԻ 55.11):

«Քանի որ ես բաց երեսով՝ առանց քողի, շարունակում եմ նայել Տիրոջ փառքին [Աստծո Խոսքի մեջ]՝ ինչպես հայելու մեջ, ես մշտապես այլակերպվում եմ Նրա պատկերով, հարաճուն շուքով, և փառքի մի մակարդակից՝ մյուսը [որովհետև սա գալիս է] Տիրոջից [Ով Հոգին է]՝ Հոգուց» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.18):

«Աստծո Խոսքը՝ ճշմարտություն է: Ուսումնասիրելով Խոսքը և մտորելով դրա շուրջ՝ ես կճանաչեմ ճշմարտությունը, և ճշմարտությունը ազատ կարձակի ինձ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.17, 8.32):

Գլուխ 1. Ապրծո սերը

«Այնուամենայնիվ, բոլոր այս բաների մեջ ես ավելի, քան հաղթող եմ և գերազանց հաղթանակ եմ տանում Նրա միջոցով, Ով սիրում է ինձ:

Որովհետև համոզված եմ՝ առանց կասկածի նշույլի

(ես հաստատ գիտեմ), որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ սպասվող կամ սպառնացող բաներ, ո՛չ գալիք բաներ, ո՛չ զորություններ,

Ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, ո՛չ էլ ցանկացած այլ բան ամբողջ ստեղծագործության մեջ չի կարողանա բաժանել ինձ Աստծո սիրուց, որը Քրիստոս Հիսուսում՝ իմ Տիրոջ մեջ է» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.37-39):

«Որովհետև Աստված այնպե՞ս սիրեց և այնքա՞ն թանկ գնահատեց ինձ, որ Նա [նույնիսկ] տվեց Իր միածին (եզակի) Որդուն ինձ համար, որպեսզի ես՝ ով որ հավատում է (վստահում է, հարում է, հուսացած է) Նրան, չմահանամ (չկործանվեմ, չկորչեմ), այլ ունենամ հավիտենական (հավերժ) կյանք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.16):

«Հայրն՝ Ինքը, [քնքշորեն] սիրում է ինձ, որովհետև ես սիրում եմ Հիսուսին և հավատում եմ, որ Նա դուրս եկավ Հորից» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.27):

«Քանի որ ես ունեմ Հիսուսի պատվիրանները և պահում եմ դրանք, ես [իսկապես] սիրում եմ Հիսուսին և կսիրվեմ Նրա Հոր կողմից, և Հիսուսը [նույնպես] կսիրի ինձ և ցույց կտա (կհայտնի, կդրսևորի) Իրեն: [Նա պարզորեն տեսանելի կդարձնի Իրեն ինձ համար և իրական կդարձնի Իրեն ինձ համար]» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.21):

«Ես սիրում եմ Տիրոջը, որովհետև Նա առաջինը սիրեց ինձ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.21):

«Որքա՜ն թանկ է Քո հաստատ սերը, ո՜վ Աստված: Ես ապաստան եմ գտնում և հույսով ապրում եմ Քո թևերի շուքի տակ» (ՍԱՂՄՈՍ 36.7):

«Ո՜վ Տեր, Դու քննեցիր իմ սիրտը և գիտես ամեն ինչ իմ մասին: Դու գիտես, երբ եմ նստում կամ կանգնում: Երբ հեռվում եմ, Դու գիտես իմ ամեն մի միտքը: Դու գծում ես այն շավիղը, որն իմ առջևում է, և ասում ես ինձ, թե որտեղ կանգ առնեմ և հանգստանամ: Ամեն պահին Դու գիտես, թե որտեղ եմ ես: Դու գիտես, թե ինչ եմ ասելու, նույնիսկ՝ մինչև իմ ասելը: Դու և՛ նախորդում ես, և՛ հետևում ես ինձ, և Քո օրհնության ձեռքը դնում ես իմ գլխին:

Սա այնքա՜ն փառավոր և հրաշալի է՝ հավատալու համար: Ես երբեք չեմ կարող թաքնվել Քո Հոգուց: Ես երբեք չեմ կարող փախչել իմ Աստծուց…

Տե՛ր, որքա՜ն թանկ է գիտակցելը, որ Դու շարունակ մտածում ես իմ մասին: Ես նույնիսկ չեմ կարող հաշվել, թե օրվա մեջ քանի՜ անգամ են Քո մտքերը դառնում դեպի ինձ: Եվ երբ արթնանում եմ առավոտյան, Դու դեռ շարունակում ես մտածել իմ մասին» (ՍԱՂՄՈՍ 139.1-7,17,18, TLB):

«Տերն [փափագով] սպասում է [ակնկալում է, փնտրում և ձգտում է] ողորմած լինել իմ հանդեպ, այդ իսկ

պատճառով, Նա բարձրանում է, որպեսզի ողորմա ինձ և սիրով լի գթասրտություն ցուցաբերի իմ հանդեպ: Որովհետև Տերը արդարության Աստված է: Օրհնված (երջանիկ, բախտավոր, նախանձելի) եմ ես, որովհետև [փափագով] սպասում եմ Նրան, ես ակնկալում, փնտրում և ձգտում եմ Նրան [Նրա հաղթանակին, Նրա բարեհաճությանը, Նրա սիրուն, Նրա խաղաղությանը, Նրա ուրախությանը և Նրա աննման, անխախտ ընկերակցությանը]» (ԵՍԱՅԻ 30.18):

«Տերը չի թողնի ինձ որբ [անմխիթար, լքված, առանց հարազատների, մոռացված, անօգնական]. Նա [ետ] կգա ինձ մոտ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.18):

«Թեև հայրս և մայրս լքեն ինձ, սակայն Տերը կբարձրացնի ինձ [կորդեգրի ինձ՝ դարձնելով Իր զավակը]» (ՍԱՂՄՈՍ 27.10):

«Քրիստոսն իմ հավատքի միջոցով [իրականում] բնակվում է (հաստատվում է, ապրում է) իմ սրտում (դարձնում է այն Իր մշտական տունը): Ես խորապես արմատացած եմ սիրո մեջ և ապահով հիմնված եմ սիրո վրա:

Ես զորություն ունեմ ուժեղ լինելու, ըմբռնելու և հասկանալու բոլոր սրբերի հետ [Աստծո նվիրված մարդկանց, այդ սիրո վերապրումը], թե ինչ է [դրա]

լայնությունը և երկարությունը և բարձրությունը և խորությունը:

[Ես իրականում] ճանաչել եմ [գործնականորեն, ինքս՝ փորձառության միջոցով] Քրիստոսի սերը, որը շատ ավելի գերազանցում է հասարակ գիտելիքը [առանց փորձառության]. ես լցված եմ [իմ ամբողջ էությամբ] Աստծո ամբողջ լիությամբ [ես ունեմ աստվածային ներկայության ամենաառատ չափը և դառնում եմ այնպիսի մարմին, որն ամբողջովին լցված և հեղեղված է անձամբ Աստծով]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.17-19):

«Հիսուսը սիրում է ինձ այնպես, ինչպես Հայրն է սիրում Նրան. այդ իսկ պատճառով, ես ապրում եմ Նրա սիրո մեջ: Եվ ահա թե ինչպես կարող եմ չափել Նրա սերն իմ հանդեպ. մեծագույն սերը ցուցաբերվում է, երբ մարդը դնում է իր կյանքն իր ընկերների համար» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.9,13, TLB):

«Աստված ցույց է տալիս և պարզորեն ապացուցում է Իր սերն իմ հանդեպ այն փաստով, որ երբ դեռ մեղավոր էի, Քրիստոսը (Մեսիան, Օծյալը) մահացավ ինձ համար» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.8):

«Տիրոջ բարությունն այնքա՜ն առատ է իմ հանդեպ, որ Նա վերցրեց բոլոր մեղքերս Իր Որդու արյամբ, Ում միջոցով ես փրկված եմ: Նա անձրևեց ինձ վրա Իր

շնորհքի առատությունը՝ այն, թե որքա՜ն լավ է Նա հասկանում ինձ, և գիտի, թե ինչն է լավագույնը ինձ համար ամեն ժամանակ» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.7, TLB):

«Որովհետև թեև սարերն էլ բաժանվեն և բլուրները ցնցվեն կամ հեռանան, սակայն Աստծո սերը և բարությունը չի բաժանվի ինձնից, ո՛չ էլ Նրա խաղաղության և ամբողջականության ուխտը կհեռանա, որովհետև Տերը գթած է իմ հանդեպ» (ԵՍԱՅԻ 54.10):

«Աստված հավատարիմ է (հուսալի, վստահելի, և այդ պատճառով, մշտապես հավատարիմ է Իր խոստմանը, և ես կարող եմ կառչած լինել Նրանից)» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 1.9):

«Օրհնի՛ր (սիրառատ կերպով և գոհությամբ գովաբանի՛ր) Տիրոջը, ո՛վ իմ անձ, և այն ամենը, ինչ [խորը] իմ ներսում է, օրհնի՛ր Նրա սուրբ անունը:

Օրհնի՛ր (սիրառատ կերպով և գոհությամբ գովաբանի՛ր) Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր բարիքները [դրանցից ոչ մեկը].

Ով ներում է իմ բոլոր [ամեն մի] անօրինությունները,

Ով բժշկում է իմ բոլոր [ամեն մի] հիվանդությունները,

Ով փրկում է իմ կյանքը գուբից և ապականությունից, Ով զարդարում, վեհացնում և թագադրում է ինձ՝ սիրով լի բարությամբ և գթառատ ողորմությամբ» (ՍԱՂՄՈՍ 103.1-4):

«Տերը լցնում է իմ կյանքը բարի բաներով: Իմ երիտասարդությունը նորոգվում է արծվի երիտասարդության պես: Նա արդարություն է տալիս նրանց, ում հետ անարդար են վարվել…

Նա ողորմած և գթառատ է նրանց հանդեպ, ովքեր արժանի չեն դրան. Նա դանդաղորեն է բարկանում և լի է բարությամբ ու սիրով: Նա երբեք ոխ չի պահում, ո՛չ էլ հավիտյան բարկացած է մնում… որովհետև Նրա ողորմությունը նրանց հանդեպ, ովքեր վախենում են Իրենից և պատվում են Իրեն, նույնքան մեծ է, որքան երկինքների բարձրությունը՝ երկրից: Նա ինձնից հեռացրել է իմ մեղքերն այնքա՜ն, որքան արևելքը՝ արևմուտքից: Նա հոր պես է ինձ համար, գթառատ և կարեկցող իմ հանդեպ, որովհետև ես երկյուղածությամբ եմ վերաբերվում Նրան…

Տիրոջ սիրով լի բարությունը հավիտենից հավիտյան է» (ՍԱՂՄՈՍ 103.5,6,8,9,11-13,17, TLB):

«Հարատև սերը շրջապատում է ինձ, որովհետև ես վստահում եմ Տիրոջը» (ՍԱՂՄՈՍ 32.10, TLB):

«Ես կփառաբանեմ Տիրոջը՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում: Ես շարունակ կխոսեմ Նրա փառքի և շնորհքի մասին: Ես կպարծենամ իմ հանդեպ ունեցած Նրա բարությունով: Թող որ նրանք, ովքեր վիատված

են, քաջալերվեն: Եկե՛ք միասին փառաբանենք Տիրոջը և մեծարենք Նրա անունը:

Որովհետև ես աղաղակեցի Նրան, և Նա պատասխանե՞ց ինձ: Նա ազատե՞ց ինձ իմ բոլոր վախերից: Մյուսները նույնպես փայլում էին այն պատճառով, թե ինչ արեց Աստված նրանց համար: Նրանց հայացքները մերժվածությունից իջեցված չէին: Ես աղաղակեցի Տիրոջը, և Տերը լսեց ինձ, և իմ բոլոր նեղություններից փրկեց ինձ: Որովհետև Տիրոջ Հրեշտակը պահպանում և փրկում է նրանց, ովքեր երկյուղած են Իր հանդեպ:

Ես փորձեցի Աստծուն և տեսա, թե որքա՞ն բարի է Նա: Ես անձամբ համոզվեցի, թե ինչպես են Նրա ողորմություններն անձրևի նման գալիս նրանց վրա, ովքեր վստահում են Նրան» (ՍԱՂՄՈՍ 34.1-8, TLB):

Գլուխ 2. Ձեր ապագան

«Թշվառ և տառապյալ մարդու բոլոր օրերը չար են դառնում [անհանգիստ մտքերի և կանխազգացումների պատճառով], բայց քանի որ ես ուրախ սիրտ ունեմ, մշտապես խնջույքի մեջ եմ [անկախ հանգամանքներից]» (ԱՌԱԿԱՑ 15.15):

«[Ի՞նչ, ի՞նչ կլիներ ինձ հետ], եթե չհավատայի, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը կենդանիների երկրում:

Ես սպասում ու ակնկալում եմ Տիրոջը, ես հուսացած եմ Նրան. ես համարձակ և խիզախ եմ և թույլ եմ տալիս, որ սիրտս հաստատ և տոկուն լինի: Այո՛, սպասում և ակնկալում եմ Տիրոջը և հուսացած եմ Նրան» (ՍԱՂՄՈՍ 27.13,14):

«Ես գիտեմ, որ այն մտքերն ու ծրագրերը, որոնք Տերն ունի ինձ համար, մտքեր ու ծրագրեր են բարեկեցության և խաղաղության, այլ ոչ թե չարիքի համար, որպեսզի Նա տա ինձ հույս իմ վերջնական արդյունքի համար» (ԵՐԵՄԻԱ 29.11):

«Ինչո՞ւ ես տրտում, ո՜վ իմ ներքին անձ: Եվ ինչո՞ւ դու պետք է հառաչես ինձ համար և խռովված լինես իմ ներսում: Ես կհուսամ Աստծուն և անհամբեր կսպասեմ Նրան, որովհետև դեռևս կփառաբանեմ Նրան, Ով իմ երեսի օգնությունն է և իմ Աստվածը» (ՍԱՂՄՈՍ 42.11):

«Այդպիսի հույսը երբեք հուսախաբ չի անում, չի ստում և չի ամաչեցնում ինձ, որովհետև Աստծո սերը լցված է իմ սրտում Սուրբ Հոգու միջոցով, Ով տրվել է ինձ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.5):

«Տեր Աստվածը արև է և վահան: Տերը շնորհք և փառք կտա. ոչ մի բարի բան չի պահվի ինձնից, որովհետև իմ ընթացքն ուղիղ է» (ՍԱՂՄՈՍ 84.11, KJV):

«Ես վստահ և համոզված եմ հենց այն բանում, որ Նա, Ով բարի գործ սկսեց ինձանում, կշարունակի մինչև Հիսուս Քրիստոսի օրը [ճիշտ մինչև Նրա վերադարձի ժամանակը]՝ զարգացնելով [այդ բարի գործը] և կատարելագործելով ու բերելով այն ամբողջական ավարտվին ինձանում» (ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 1.6):

«Ես Աստծո ձեռքի գործն եմ (Նրա գործակիցը), վերստեղծված [վերստին ծնված] Քրիստոս Հիսուսում, որպեսզի կատարեմ այն բարի գործերը, որոնք Աստված նախասահմանել է (նախապես ծրագրել է) ինձ համար՝ [քայլելով այն շավիղներով, որոնք Նա նախօրոք պատրաստել է], որ քայլեմ դրանցում [ապրելով այն բարի կյանքը, որը Նա նախապես ծրագրել և պատրաստել է, որ ապրեմ այն]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.10):

«Կա [նշանակված] ժամանակ ամեն գործի և մտադրության ու ամեն աշխատանքի համար: Այդ պատճառով, ես խոնարհվում եմ Աստծո հզոր ձեռքի տակ, որ ժամանակին Նա կարողանա բարձրացնել ինձ» (ԺՈՂՈՎՈՂ 3.17, Ա ՊԵՏՐՈՍ 5.6):

«Այն բաները, որոնք Տերը ծրագրում է, անմիջապես տեղի չեն ունենա: Դանդաղ, կայուն և հաստատուն կերպով մոտենում է այն ժամանակը, երբ տեսիլքը կիրականանա: Եթե թվում է, թե այն դանդաղում է, ես

չեմ հուսահատվում, որովհետև այս բաներն անպատ-ճառ կիրականանան: Ես պարզապես համբերատար կլինեմ. դրանք չեն ուշանա, նույնիսկ մեկ օրով» (ԱՄԲԱԿՈՒՄ 2.3, TLB):

«Ես մեծապես խրախուսված եմ, որովհետև ապաս-տան են գտել՝ բռնելով այն հույսը, որը դրված է իմ առջև: Այս հույսը՝ որպես անձի խարիսխ, և՛ հաստատ է, և՛ անսասան» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 6.18,19, NAS):

«Ես վախեցած չեմ, որովհետև վստահեմ ու գիտեմ, որ [քանի որ Աստված իմ գործընկերն է աշխատանքի մեջ] ամեն բաները գործում են միասին և [համապա–տասխանում են Աստծո ծրագրին] ի բարին, որովհետև ես սիրում եմ Աստծուն և կանչված եմ՝ համաձայն [Նրա] ծրագրի և նպատակի» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.28):

«Իմ Աստված կարող է [իրականացնել Իր նպատակը և] անել գերառատորեն, շատ ավելի և բարձր, քան ես [համարձակվում եմ խնդրել կամ մտածել] խնդրում կամ մտածում եմ [անսահմանորեն ավելի շատ, քան իմ ամենավեհ աղոթքները, ցանկությունները, մտքերը, հույսերը կամ երազանքները]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.20):

«Հիսուս Քրիստոսում ես դարձել եմ [Աստծո] ժառան-գությունը (բաժինը) և ձեռք եմ բերել ժառանգություն, որովհետև նախասահմանված եմ եղել (նախապես

ընտրված և նշանակված)՝ համաձայն Նրա նպատակի, Ով իրականացնում է ամեն ինչ՝ ըստ Իր կամքի խորհրդի և ծրագրի» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.11):

«Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա իմ բերանից, այլ ես պետք է մտորեմ դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանամ պահել և կատարել՝ համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ ես բարգավաճ կդարձնեմ իմ ընթացքը և իմաստուն կվարվեմ ու բարի հաջողություն կունենամ» (ՀԵՍՈՒ 1.8):

«Խոսքը շատ մոտ է ինձ, իմ բերանում, իմ մտքում և իմ սրտում է, որպեսզի կարողանամ կատարել այն» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 30.14):

«Այսպես կլինի Աստծո Խոսքը, որը դուրս է գալիս իմ բերանից. այն դատարկ [առանց որևէ օգուտ տալու, զուր] չի վերադառնա Նրա մոտ, այլ կիրականացնի այն, ինչը հաճեցնում է Նրան և ինչը Նրա նպատակն է, և կհաջողվի այն բանում, ինչի համար Նա ուղարկեց այն» (ԵՍԱՅԻ 55.11):

«Քանի որ ես բաց երեսով՝ առանց քողի, շարունակում եմ նայել [Աստծո Խոսքի մեջ]՝ ինչպես հայելու մեջ՝ Տիրոջ փառքին, ես մշտապես այլակերպվում եմ Նրա պատկերով, հարաճուն շուքով և փառքի մի մակարդակից՝ մյուսը [որովհետև սա գալիս է] Տիրոջից՝ Հոգուց [Ով Հոգին է]» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.18):

«Ես չեմ նմանվում այս աշխարհին (այս ժամանակաշրջանին) [հարմարեցված և փոփոխված՝ ըստ դրա արտաքին, մակերեսային սովորույթների], այլ՝ վերափոխվում եմ (փոխվում եմ) իմ մտքի [ամբողջական] նորոգությամբ [նոր իդեալներով և դիրքորոշմամբ], որպեսզի [անձամբ] համոզվեմ, թե ինչ է Աստծո բարի և ընդունելի և կատարյալ կամքը՝ հենց այն, ինչը բարի և ընդունելի և կատարյալ է [Նրա աչքերում ինձ համար]» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.2):

«Աստծուն հաճելի էր՝ իմացնել ինձ, թե որքա՜ն մեծ են այս առեղծվածի փառավոր հարստությունները, որն է՝ Քրիստոսն իմ մեջ՝ փառքի [իրականացման] Հույսը» (ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1.27):

«Ես էլ կանչում եմ այն բաները, որոնք չկան, ասես թե դրանք կան. ես հռչակում եմ, որ ընտրյալ ցեղի, թագավորական քահանայության, նվիրյալ ազգի, [Աստծո] սեփական գնվածների, հատուկ ժողովրդի մասն եմ, որպեսզի պատմեմ Նրա հրաշալի գործերը և ցուցադրեմ Նրա առաքինությունները և կատարելությունները, Ով խավարից կանչել է ինձ՝ Իր զարմանալի լույսի մեջ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 4.17, KJV, Ա ՊԵՏՐՈՍ 2.9):

«Քանի որ ես Տիրոջինն եմ, Նա հրապարակավ կճանաչի և բացահայտ կհռչակի ինձ՝ որպես Իր զարդը (Իր

հատուկ սեփականությունը և Իր հատուկ գանձը), և Նա կխնայի ինձ՝ ինչպես մարդը խնայում է իր որդուն, ով ծառայում է իրեն» (ՄԱՂԱՔԻԱ 3.17):

«Ինչպես Պողոս առաքյալը, ես չեմ համարում, որ [արդեն] ձեռք եմ բերել և հասել եմ. բայց ես մեկ բան եմ անում [դա իմ ձգտումն է]. մոռանալով այն, ինչ ետևում է, և նկրտելով առաջ՝ դեպի այն, ինչ առջևում է,

«Ես շարունակում եմ առաջ գնալ, որպեսզի հաղթեմ [գերազանց և երկնային] մրցանակը, որի համար Աստված Քրիստոս Հիսուսում վեր է կանչում ինձ» (ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 3.13,14):

«Ես [ջանալով] չեմ հիշում նախկին բաները. ո՛չ էլ մտածում եմ հին բաների մասին:

Ահա՛, Տերը նոր բան է անում: Ահա՛ այն ի հայտ է գալիս. ես զգում եմ և գիտեմ դա, և ուշադրություն եմ դարձնում դրան: Նա նույնիսկ ճանապարհ կբացի ինձ համար ամայի վայրում և ջրերի գետեր՝ անապատում» (ԵՍԱՅԻ 43.18,19):

«Քանի որ ես պատկանում եմ Տիրոջը, Նա մաքրում և չեղյալ է դարձնում իմ անօրինությունները՝ հանուն Իրեն, և չի հիշում իմ մեղքերը» (ԵՍԱՅԻ 43.25):

«Քանի որ ես սպասում եմ Տիրոջը [ակնկալում եմ,

փնտրում եմ և հուսացած եմ Նրան], ես կփոխեմ ու կնորոգեմ իմ ուժը և զորությունը. ես կբարձրացնեմ իմ թևերը և վեր կսլանամ [Աստծուն մոտ]՝ ինչպես արծիվները (սլանում են վեր՝ դեպի արևը). ես կվազեմ և ուժասպառ չեմ լինի, ես կքայլեմ և չեմ թուլանա ու չեմ հոգնի» (ԵՍԱՅԻ 40.31):

«Ես լիովին վստահ և բավարարված եմ, որ Աստված կարող է և զորավոր է, որ պահի Իր Խոսքը և կատարի այն, ինչ խոստացել է ինձ, որովհետև ես աստվածային կոչում ունեմ, որը պետք է իրականացնեմ» (ՀՌՈՄԵԱ-ՑԻՆԵՐԻ 4.21):

Գլուխ 3. Ձեր արդարությունը Քրիստոսում

«Որովհետև հանուն ինձ՝ Աստված Քրիստոսին՝ Ով մեղք չգիտեր, [փաստորեն] մեղք դարձրեց, որպեսզի Նրանում և Նրա միջոցով կարողանամ դառնալ [օժտված լինել դրանով, լինել օրինակ, դիտվել՝ որպես] Աստծո արդարությունը [այն, ինչ ես պետք է լինեմ՝ հավանություն ստացած և ընդունելի՝ Նրա կողմից, և ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ՝ Նրա բարությամբ]» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.21):

«Ինչպես որ Քո անունն է, ո՞վ Աստված, այնպես էլ Քո գովասանքն է մինչև երկրի ծայրերը. Քո աջ ձեռքը լիքն է արդարությամբ (իրավունքով և արդարադատությամբ)» (ՍԱՂՄՈՍ 48.10):

«Եվ Նա կհաստատի ինձ մինչև վերջ [հաստատ կպահի ինձ, ուժ կտա և կերաշխավորի իմ արդարացումը. Նա կլինի իմ երաշխիքը՝ ընդդեմ բոլոր մեղադրանքների և ամբաստանությունների, այնպես որ ես կլինեմ] անմեղ և անպարսավելի մեր Տեր Հիսուս Քրիստոսի (Մեսիայի) օրը» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 1.8):

«Օրհնված և բախտավոր և երջանիկ և հոգևորապես բարգավաճ եմ (այն վիճակում, որում Աստծո վերստին ծնված զավակը վայելում է Նրա բարեհաճությունը և փրկությունը)՝ ով քաղց և ծարավ ունի արդարության հանդեպ (ուղղության ճիշտ դիրք՝ Աստծո առջև), որովհետև ես լիովին հագեցած կլինեմ» (ՄԱՏԹԵՈՍ 5.6):

«Ես գցում եմ իմ բեռը Տիրոջ վրա [ազատվելով դրա ծանրությունից] և Նա նեցուկ կլինի ինձ. Նա երբեք թույլ չի տա, որ [մշտապես] արդար մարդը շարժվի (սայթաքի, ընկնի կամ ձախողվի)» (ՍԱՂՄՈՍ 55.22):

«Աստվածաշունչը գրվեց նաև ինձ համար, որպեսզի ես իմանամ, որ [արդարությունը, Աստծո կողմից ընդունելի դիրքը] կշնորհվի նաև ինձ և կգրանցվի նաև իմ

հաշվին, որովհետև ես հավատում եմ (վստահում եմ, հարում եմ և ապավինում եմ) Աստծուն, Ով հարություն տվեց Հիսուսին՝ իմ Տիրոջը, մեռելներից» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 4.24):

«Ուրեմն, քանի որ ես արդարացված եմ (արդար եմ հռչակված և արդար դիրք եմ ստացել Աստծո առջև) հավատքի միջոցով, ես [ընբռնում եմ այն փաստը, որ] ունեմ [հաշտության խաղաղությունը՝ այն բռնելու և վայելելու համար] խաղաղություն Աստծո հետ իմ Տեր Հիսուս Քրիստոսի (Մեսիայի, Օծյալի) միջոցով» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.1):

«Քանի որ ես արդար մարդ եմ, ես վարվում եմ իմ անկեղծությամբ. օրհնված (երջանիկ, բախտավոր, նա-խանձելի) են իմ երեխաները ինձնից հետո» (ԱՌԱԿԱՑ 20.7):

«Քանի որ ես [մշտապես] արդար եմ, իմ փրկությունը Տիրոջից է. Նա է իմ Ապաստանը և ապահով Ամրոցը նեղության ժամանակ» (ՍԱՂՄՈՍ 37.39):

«Որևէ զենք, որը պատրաստված է իմ դեմ, հաջողություն չի ունենա, և ամեն լեզու, որը դատաստանի կբարձրանա իմ դեմ, ես սխալ ցույց կտամ: Սա [խաղաղությունը, արդարությունը, ապահովությունը, հաղթանակ՝ ընդդեմ հակառակության] իմ ժառանգությունն է՝

որպես Տիրոջ ծառայի [ում մեջ վերարտադրվել է Տիրոջ կատարյալ Ծառան]. սա այն արդարությունն է կամ արդարացումն է, որը ես ստանում եմ Նրանից [սա այն է, ինչը Նա տալիս է ինձ՝ որպես իմ արդարացումը]» (ԵՍԱՅԻ 54.17):

«Քանի որ ես [փոխզիջման չգնացող] արդար եմ, Տիրոջ աչքերը դեպի ինձ են, և Նրա ականջները բաց են իմ աղաղակին:

Երբ ես՝ արդարս, աղաղակում եմ օգնության համար, Տերը լսում և ազատում է ինձ իմ բոլոր վշտերից և նեղություններից:

Շատ չարիքներ են հակառակվում ինձ՝ [մշտապես] արդարին, բայց Տերն ազատում է ինձ այդ ամենից:

Քանի որ ես Տիրոջ ծառան եմ, Նա փրկում է իմ կյանքը: Ես ապաստան եմ գտնում Նրանում և վստահում եմ Նրան, և ես դատապարտված չեմ լինի կամ մեղավոր չեմ համարվի» (ՍԱՂՄՈՍ 34.15,17,19,22):

«Ես կհաստատվեմ արդարությամբ (ուղղությամբ, համապատասխան Աստծո կամքին և կարգին). ես հեռու կլինեմ նույնիսկ ճնշման և կործանման մասին մտքից, որովհետև ես չեմ վախենա, հեռու կլինեմ սարսափից, որովհետև այն մոտ չի գա ինձ» (ԵՍԱՅԻ 54.14):

«Քանի որ ես [փոխզիջման չգնացող] արդար եմ, ես համարձակ եմ առյուծի պես» (ԱՌԱԿԱՑ 28.1):

«Ես չունեմ այնպիսի Քահանայապետ, Ով անկարող է հասկանալ, կարեկցել և կիսել տկարությունների և թուլությունների հանդեպ իմ զգացմունքները, և գայթակղության հարձակումներին ենթակա լինելու մասին իրողությունը, բայց Այնպիսին, Ով գայթակղվել է ամեն առումով, ինչպես և ես, սակայն՝ առանց մեղք գործելու:

Ուրեմն, ես վստահությամբ և համարձակությամբ մոտենում եմ շնորհքի (Աստծո՝ ոչ ըստ արժանիքի տրված բարեհաճությանը ինձ) գահին, որ ընդունեմ ողորմություն [իմ ձախողումների համար] և շնորհք գտնեմ՝ օգնելու ճիշտ ժամանակին ամեն կարիքի համար [պատշաճ օգնություն և ժամանակին օգնություն, որը գալիս է հենց այն պահին, երբ ունեմ դրա կարիքը]» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.15,16):

«Ուրեմն, քանի որ այժմ ես արդարացված եմ (արդարացվել եմ և ճիշտ փոխհարաբերությունների մեջ եմ Աստծո հետ) Քրիստոսի արյունով, որքա՜ն ավելի [հաստատ է, որ] ես կփրկվեմ Նրանով Աստծո վրդովմունքից և զայրույթից» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.9):

«Օրհնված (երջանիկ, բախտավոր, բարգավաճ և նախանձելի) եմ ես, որովհետև չեմ վարվում և չեմ ապրում անաստված մարդկանց խորհրդի մեջ [հետևելով նրանց խորհրդին, նրանց ծրագրերին և նպատակներին], ո՛չ էլ կանգնում եմ [ենթարկվելով և առանց հակառակվելու] այն ճանապարհի վրա, որտեղ քայլում են մեղավորները, ո՛չ էլ նստում եմ այնտեղ [լարվածությունս թուլացնելու և հանգստանալու համար], որտեղ հավաքվում են արհամարհող [և ծաղրող] մարդիկ:

Բայց իմ բերկրանքը և ցանկությունը Տիրոջ օրենքի մեջ է, և Նրա օրենքի (Աստծո հրահանգների, ցուցումների և ուսմունքների) շուրջ ես, սովորության համաձայն, մտորում եմ (խորհրդածում եմ և սովորում եմ) օրվա ընթացքում և գիշերվա ընթացքում:

Եվ ես կլինեմ ծառի պես, որն ամուր տնկված է [և խնամվում է] ջրերի հոսանքների մոտ՝ պատրաստ՝ պտուղ բերելու իր ժամանակին. իմ տերևը նույնպես չի կորցնի իր գույնը կամ չի թառամի, և այն ամենը, ինչ անում եմ, կհաջողվի [և ավարտին կհասցվի]» (ՍԱՂՄՈՍ 1.1-3):

«Այս Օրենքի գիրքը չպետք է հեռանա իմ բերանից,

այլ ես պետք է մտորեմ դրա շուրջ օր ու գիշեր, որպեսզի կարողանամ պահել և կատարել՝ համաձայն այն ամենի, ինչ գրված է դրանում: Որովհետև այդ ժամանակ ես բարգավաճ կդարձնեմ իմ ընթացքը, և այդ ժամանակ իմաստուն կերպով կվարվեմ ու բարի հաջողություն կունենամ» (ՀԵՍՈՒ 1.8):

«Տիրոջ անունը ամուր աշտարակ է. որպես [մշտապես] արդար մարդ [Աստծո առջև ուղիղ և ճիշտ դիրք ունեցող]՝ ես վազում եմ դրա մեջ և ապահով եմ, բարձրում եմ [չարիքից վեր] և ուժեղ եմ» (ԱՌԱԿԱՑ 18.10):

«Նրա [Քրիստոսի] օրում ես՝ [փոխզիջման չգնացող] արդարս, կծաղկեմ, և իմ խաղաղությունը կշատանա, մինչև որ այլևս լուսին չլինի» (ՍԱՂՄՈՍ 72.7):

«Սա այն համաձայնությունն է [Կտակարանը, Ուխտը], որն Աստված կնքել է ինձ հետ. Նա դրոշմել է Իր օրենքները սրտիս վրա և փորագրել է դրանք մտքիս վրա (իմ ներքին մտքերի և հասկացողության վրա):

Իմ մեղքերը և իմ օրինազանցությունը Նա այլևս չի հիշում:

Այժմ, քանի որ կա իմ [մեղքերի և օրինազանցության] բացարձակ թողություն (պատիժը ներելը և չեղյալ դարձնելը), ես այլևս կարիք չունեմ որևէ զո-

հաբերություն մատուցել՝ դրանք քավելու համար» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.16-18):

«Ես լիարժեք ազատություն և վստահություն ունեմ՝ մուտք գործելու [Սրբություն] Սրբոցը՝ Հիսուսի արյան [զորությամբ և առաքինությամբ],

Այս թարմ (նոր) և կենդանի ճանապարհով, որին Նա սկիզբ դրեց, և որը Նա սրբագործեց և բացեց ինձ հա-մար բաժանող վարագույրի (Սրբություն Սրբոցի քողի) միջով, այսինքն՝ Իր մարմնով» (ԵԲՐԱՅԵՑԻ-ՆԵՐԻ 10.19,20):

«Որովհետև հանուն ինձ՝ Աստված Քրիստոսին՝ Ով մեղք չգիտեր, [փաստորեն] մեղք դարձրեց, որպեսզի Նրանում և Նրա միջոցով կարողանամ դառնալ [օժտված լինել դրանով, լինել օրինակ, դիտվել՝ որպես] Աստծո արդարությունը [այն, ինչ ես պետք է լինեմ՝ հավանություն ստացած և ընդունելի Նրա կողմից, և ճիշտ փոխհարաբերությունների մեջ Նրա հետ՝ Նրա բարությամբ]» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.21):

Գլուխ 4. Հաղթահարե՛ք վախը

«Որովհետև Աստված չտվեց ինձ երկչոտության հոգի (վախկոտության, անվճռական և ստորաքարշ և շողոքորթող վախի), այլ [Նա տվեց ինձ] զորության, սիրո, հանդարտ ու հավասարակշռված մտքի, կարգապահության և ինքնավերահսկողության [հոգի]» (Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.7):

«Ես փնտրեցի Տիրոջը [հարցրեցի Նրան] և խնդրեցի Նրան [իմ կարիքի մեջ և Նրա Խոսքի իշխանության հիման վրա], և Նա լսեց ինձ և ազատեց ինձ իմ բոլոր վախերից» (ՍԱՂՄՈՍ 34.4):

«Ես թույլ չեմ տալիս, որ իմ սիրտը տագնապի, ո՛չ էլ թույլ եմ տալիս, որ այն վախենա [Ես դադարում եմ թույլ տալ ինքս ինձ՝ հուզվել և անհանգստանալ, և ես թույլ չեմ տալիս ինձ՝ վախենալ և երկչոտ, ճնշված ու մտահոգ լինել]» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.27):

«Երբ որ վախենամ, ես կվստահեմ ու կապավինեմ Տիրոջը:

Աստծով [Նրա օգնությամբ] ես կգովեմ Նրա Խոսքը. ես Աստծուն եմ ապավինում և վստահաբար հուսացած եմ Նրան. ես չեմ վախենա: Ի՞նչ կարող է անել մարդը, ով մարմին է» (ՍԱՂՄՈՍ 56.3,4):

«[Վախենալու ոչինչ չկա], որովհետև Տերն ինձ հետ է. ես սարսափահար չեմ նայում շուրջս և չեմ զարհուրում, որովհետև Նա իմ Աստվածն է: Նա կզորացնի և ամուր կդարձնի ինձ՝ ընդդեմ իմ դժվարությունների. այո՛, Նա կօգնի՛ ինձ. այո՛, Նա բարձր կպահի ինձ և կպահպանի Իր [հաղթական] ուղղության և արդարության աջ ձեռքով» (ԵՍԱՅԻ 41.10):

«[Աստված] Ինքն է ասել՝ Ես ոչ մի կերպով չեմ ձախողի քեզ, ո՛չ էլ կլքեմ քեզ, ո՛չ էլ կթողնեմ քեզ առանց աջակցության: **[Ես չեմ]**, **[Ես չեմ]**, **[Ես չեմ]** թողնի քեզ անօգնական և չեմ լքի քեզ, ո՛չ էլ հուսախաբ կանեմ քեզ (չեմ թուլացնի Իմ ձեռքը քո գլխից) ո՛չ մի չափով: [Անկասկած՝ ո՛չ]:

Այնպես որ, ես մխիթարվում և խրախուսվում եմ, վստահաբար և համարձակությամբ ասում եմ՝ Տերն իմ Օգնականն է, ես չեմ համակվի տագնապով [ես չեմ վախենա կամ ահ չեմ զգա կամ չեմ սարսափի]: Ի՞նչ կարող է անել ինձ մարդը» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.5,6):

«Տերը՝ իմ Աստվածը, բռնում է իմ աջ ձեռքից. Նա Տերն է, Ով ասում է ինձ՝ մի՛ վախեցիր, Ես կօգնե՛մ քեզ» (ԵՍԱՅԻ 41.13):

«Ես վախեցած չեմ, որովհետև վստահ եմ և գի-

տեմ, որ [քանի որ Աստված իմ գործընկերն է իմ աշխատանքի մեջ] բոլոր բաները գործում են միասին և [համապատասխանում են Աստծո ծրագրին] ի բարին, որովհետև ես սիրում եմ Աստծուն և կանչված եմ՝ համաձայն [Նրա] ծրագրի և նպատակի» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.28):

«Տերը, Ով ստեղծեց ինձ, ասում է՝ մի՛ վախեցիր, որովհետև ես փրկագնել եմ քեզ, ես անունովդ եմ կանչել քեզ. դու Ի՛մն ես: Երբ անցնես խորը ջրերով և մեծ նեղությամբ, ես քեզ հետ կլինեմ: Երբ անցնես դժվարության գետերով, դու չես խորտակվի: Երբ քայլես ճնշվածության կրակի միջով, չես այրվի՝ դրա բոցերը չեն սպառի քեզ: Որովհետև Ես Տերն եմ՝ քո Աստվածը, քո Փրկիչը, Իսրայելի Սուրբը» (ԵՍԱՅԻ 43.1-3, TLB):

«Ես չեմ վախենա, որովհետև վախի մեջ տանջանք կա: Փոխարենը՝ համարձակվում եմ ունենալ ազատ մուտքի (Աստծուն ազատությամբ և առանց վախի մոտենալու անսահմանափակ հնարավորություն) խիզախություն (քաջություն և վստահություն):

Այնպես որ, ես չեմ հիասթափվում [չեմ թուլանում կամ չեմ վհատվում վախի միջոցով]» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18, KJV, ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.12,13):

«Աստված իմ Ապաստանն է և Ուժը [զորեղ և անխոցելի՝ գայթակղության համար], մշտապես ներկա և վստահելի օգնություն՝ նեղության մեջ:

Այդ իսկ պատճառով, ես չեմ վախենա, թեև երկիրը փոխվի և սարերը ցնցվեն ծովերի մեջտեղում» (ՍԱՂՄՈՍ 46.1,2):

«Ես կլինեմ ուժեղ, եռանդուն և շատ քաջ: Ես չեմ վախենա, ո՛չ էլ կվհատվեմ, որովհետև Տերը՝ իմ Աստվածը, ինձ հետ է՝ ուր էլ գնամ» (ՀԵՍՈՒ 1.9):

«Ես չեմ վախենա. Տիրոջ աչքն ինձ վրա է, որովհետև ես վախենում եմ Նրանից [երկյուղածությամբ երկրպագում եմ Նրան], որովհետև ես սպասում եմ Նրան և հուսացած եմ Նրա ողորմությանը և սիրով լի բարությանը» (ՍԱՂՄՈՍ 33.18):

«Ես հոգս չեմ անում և չեմ անհանգստանում ապագայի համար, որովհետև ապագան կունենա իր հոգսերը և անհանգստությունները: Ամեն օրվա համար բավական է իր նեղությունը» (ՄԱՏԹԵՈՍ 6.34):

«Ես չեմ վախենում, որովհետև այլևս չեմ ապրում ամոթի մեջ: Իմ երիտասարդության ամոթը և իմ այրիության տրտմություններն այլևս չեն հիշվի, որովհետև իմ Արարիչը կլինի իմ «ամուսինը»: Զորքերի Տեր է Նրա

անունը. Նա՛ է իմ Փրկիչը՝ Իսրայելի Սուրբը, ամբողջ երկրի Աստվածը» (ԵՍԱՅԻ 54.4, TLB):

«Երբ գայթակղվում եմ, որ երկչոտ և շտապող սիրտ ունենամ, ես ասում եմ ինքս ինձ՝ ուժե՛ղ եղիր, մի՛ վախեցիր: Ահա՛, քո Աստված կգա վրիժառությամբ, Նա կգա Իր հատուցմամբ և կփրկի՛ ձեզ» (ԵՍԱՅԻ 35.4):

«Ես չեմ վախենա, որովհետև Տերը շնորհել է ինձ Իր փառքի հարուստ գանձարանից, որ զորանամ և ամրանամ՝ կարող զորությամբ ներսի մարդու մեջ՝ [Սուրբ] Հոգով [Ով Անձամբ բնակվում է իմ ներքին էության և անհատականության մեջ]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.16):

«Ես կփառաբանեմ Տիրոջը և կմեծարեմ Նրա անունը, որովհետև ես աղաղակեցի՝ Նրան և Նա պատասխանե՛ց ինձ: Նա փրկեց ինձ բոլոր իմ վախերից» (ՍԱՂՄՈՍ 34.3,4, TLB):

«Ես չեմ վախենում, որովհետև չկա վախ սիրո մեջ [ահ գոյություն չունի], բայց հասուն (ամբողջական, կատարյալ) սերը դուրս է անում վախը դռներից և վտարում է սարսափի ցանկացած հետք: Որովհետև վախն իր հետ բերում է միտք՝ պատժի մասին: Ես չեմ վախենում, որովհետև հասել եմ սիրո ամբողջական հասունությանը [հասել եմ սիրո ամբողջական կատարելությանը]» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18):

«Տերն իմ լույսն է և իմ փրկությունը. ումի՞ց պետք է վախենամ: Երբ չար մարդիկ գան՝ ինձ կործանելու համար, նրանք կսայթաքեն և կընկնեն: Այո՛, թեև զորավոր բանակ դուրս գա ինձ դեմ, իմ սիրտը չի վախենա: Ես վստահ եմ, որ Աստված կփրկի ինձ:

Երբ նեղություն գա, Տերը կթաքցնի ինձ: Նա վեր կհանի ինձ բարձր ժայռի վրա՝ հեռու իմ բոլոր թշնամիներից: Այդ ժամանակ ես զոհեր կմատուցեմ և մեծ ուրախությամբ կգովերգեմ Նրան» (ՍԱՂՄՈՍ 27.1-3,5,6, TLB):

«Ես չեմ վախենա, որովհետև առաջին օրվանից, երբ ուղղեցի իմ միտքը և սիրտը, որ հասկանամ և խոնարհեցնեմ ինձ իմ Աստծո առջև, իմ խոսքերը լսվեցին, և Աստված ուղարկեց Իր հրեշտակին իմ խոսքերի պատճառով [և ի պատասխան դրանց]» (ԴԱՆԻԵԼ 10.12):

«Երբ ինձ դատավարության բերեն ղեկավարների և իշխանավորների առջև, ես հոգս չեմ անի այն մասին, թե ինչ ասեմ իմ պաշտպանության համար, որովհետև Սուրբ Հոգին կտա ինձ ճիշտ բառեր, հենց այն ժամանակ, երբ այդտեղ կանգնած լինեմ» (ՂՈՒԿԱՍ 12.11, TLB):

«Տե՛րն է իմ հովիվը, և կարոտություն չե՛մ ունենա:

Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ տանում է ինձ:

Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարության շավիղներում՝ Իր անվան համար:

Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես. Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ:

Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. Դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է:

Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը կբնակվեմ շա՜տ երկար ժամանակ» (ՍԱՂՄՈՍ 23.1-6, ԱՐԱՐԱՏ):

Ամփոփում. Հաստա՛տ կանգնեք

«Արդ այն ազատությունով, որով Քրիստոսը ազատեց մեզ, ես հաստատ կկանգնեմ և դարձյալ ծառայության լծի տակ չե՛մ մտնի» (ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.1, KJV):

«Ես դեն չեմ գցի իմ անվախ վստահությունը, որովհետև այն մեծ և փառավոր վարձատրության հատուցում ունի:

Որովհետև ես հաստատ համբերության և հարատևության կարիք ունեմ, որպեսզի կատարեմ և ամբողջական ավարտին հասցնեմ Աստծո կամքը, և սրանով իսկ ընդունեմ ու վերցնեմ [և լիարժեք կերպով վայելեմ] այն, ինչ խոստացված է» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.35,36):

Հղումներ

Սուրբգրային մեջբերումները, որոնք նշված են (KJV) հապավումով, Աստվածաշնչի «King James Version» թարգմանությունից են:

Սուրբգրային մեջբերումները, որոնք նշված են (TLB) հապավումով, Աստվածաշնչի «The Living Bible» թարգմանությունից են, © 1971: Օգտագործված է «Tyndale House Publishers, Inc.»-ի թույլտվությամբ, Ուիտոն, Իլլինոյս, 60189: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սուրբգրային մեջբերումները, որոնք նշված են (NAS) հապավումով, Աստվածաշնչի «New American Standard Bible» թարգմանությունից են: Հեղինակային իրավունքները © «Lockman Foundation» 1960, 1962, 1963, 1968, 1971, 1972, 1973, 1975, 1977: Օգտագործված է ըստ թույլտվության:

Սուրբգրային մեջբերումները, որոնք նշված են (ԱՐԱՐԱՏ) բառով, Աստվածաշնչի «Արարատ» արևելահայերեն թարգմանությունից են, 1896:

Հեղինակի մասին

Ջոյս Մայերն ուսուցանում է Աստծո Խոսքը 1976 թվականից և լրիվ ժամանակվա ծառայության մեջ է 1980 թվականից: Նա ավելի քան վաթսուն ոգեշնչող գրքերի հեղինակ է, որոնցից են՝ «Ձգտել խաղաղությանը», «Ինչպե՞ս լսել Աստծուց», «Մտերմորեն ճանաչել Աստծուն» և «Միտքը կռվի դաշտն է»: Նա նույնպես թողարկել է հազարավոր ձայներիզներ և ամբողջական տեսադարան: Ջոյսի «Վայելելով ամենօրյա կյանքը» ռադիո և հեռուստատեսային հաղորդումները հեռարձակվում են աշխարհով մեկ: Նա շատ է ճանապարհորդում՝ համաժողովներ անցկացնելով: Ջոյսը և նրա ամուսինը՝ Դեյվը, ունեն չորս չափահաս երեխա և բնակվում են Սենթ Լուիսում՝ Միսսուրիում:

Աստված սպասում է, որ փրկի ձեր կյանքը:

Աստված սիրում է ձեզ: Նա հրաշալի և փառավոր ծրագիր ունի ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, հնարավոր է՝ երբեմն դժվարանաք հավատալ, որ Նա հատուկ ճանապարհ է պատրաստել ձեզ համար: Եթե դուք վերքեր եք ստացել անցյալում կամ անարժան եք զգում ձեզ, միգուցե դժվար լինի ընդունել Աստծո անպայմանական սերը: Այսօր Աստված ցանկանում է հպվել ձեզ: Շարունակե՛ք հուսալ… այս գրքում պատասխան կա ձեզ համար:

Այս գրքի էջերում Ջոյս Մայերը սովորեցնում է՝ ինչպես փոխել ձեր պատկերացումը սեփական անձի մասին և ընդունել այն, թե ինչպես է Աստված տեսնում ձեզ: Երբ դուք հավատաք այն ամենին, ինչ Աստված ասում է ձեր մասին, ձեր ներկան և ապագան հրաշքով կփոխվեն՝ արտացոլելով Նրա աստվածային ծրագիրը: Դուք կսովորեք՝ ինչպես հաղթել վախը և հանգստություն ունենալ ձեր մտքում, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ձեր ապագան վստահում եք Աստծուն:

Թույլ տվեք, որ Աստծո Խոսքը գործի ձեզանում այսո՛ր: Հենց այս պահից թույլ տվեք, որ Աստծո անսահման սերը հպվի ձեզ և բժշկի ձեր կոտրված սիրտը:

Այցելեք tv.joycemeyer.org՝ դիտելու համար Ջոյսի ուղերձները բազմաթիվ լեզուներով: